

Ի ՊԱՏԻԻ

ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՌԳԵԿՈԶՈՒՄ Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

(26 նոյեմբեր 1978)

Մխիթարեան Հայրերու Ս. Ղազարու Հայկական Կանառի գործունէութեան 1978-79 տարեշրջանի առաջին նիստը նուիրուեցաւ հանդիսապէս ոգեկոչելու ԺԸ. դարու մեր ազգային, եկեղեցական ու մշակութային կեանքի լուսաւոր դէմքերէն՝ Կ. Պալսոյ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը, իր ծննդեան 300ամեակին առիթով:

Ի ներկայութեան վանաբնակ բոլոր Հայրերուն, նիստին նախագահեց Միաբանութեան Ընդհ. Արքահայրը՝ Գեր. Պօղոս Վրդ. Անանեան, որ դրուատիքի բառերով բացաւ հաւաքոյթը:

Յաջորդաբար, Կանառին Քարտուղարը՝ Հ. Լեւոն Զէֆիեան յուղեկայս կարդաց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակը, նուիրուած Կոլոտ Պատրիարքի ծննդեան 300ամեակի յորելինական յիշատակին:

Հուսկ՝ Հ. Սահակ Ճեմնեմեան հանդէս եկաւ պատմաֆնական ընդարձակ ուսումնասիրութեամբ մը, խորագիր ունենալով՝ «Յովհաննէս Կոլոտ Պատրիարք եւ Մխիթար Արքահայր»: Մեծարգոյ բանախօսը, այս առիթով, կը յայտնաբերէր Ս. Ղազարու դիւանական վաւերաթուղթերուն մէջ պահուած բազմաթիւ նորանոր նիւթեր՝ Կոլոտ Պատրիարքի մասին, ջանալով համադրել բոլորը՝ ժամանակակից դէմքերու եւ ըմբռնումներու լոյսին տակ, ընդգծելու համար Կոլոտի կենսագրութեան զանազան դրուագները, որոնցմէ կը ցայտեն անոր գրասիրութիւնը, հաշտարար ու լայնախոհ ոգին՝ դարուն եկեղեցական բարդ խնդիրներուն մէջ, ինչպէս նաեւ գնահատման Եւ համակրանքի ջերմ արտայայտութիւնները՝ Մխիթար Արքաօր անձին ու գործին նկատմամբ:

Սոյն բանախօսութիւնը, վերամշակուած, լոյս կը տեսնէ «Բագմավէպ»ի ներկայ թիւին մէջ, իբր յաւելուած ունենալով Կարապետ Կաթողիկոս Ուլնեցիի (1726-1729) անտիպ ինքնակենսագրութիւնը, ուր նոյնպէս կը յայտնուին կարեւոր տուեալներ՝ Կոլոտի կեանքին ու գործունէութեան շուրջ:

ԽՄԲ.

ՆՈՐ ՆԻԻԹԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՊԱՏՐԻԱՐԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏԻ ՄԱՍԻՆ

(ՔԱՂՈՒԱԾ՝ Ս. ՂԱԶԱՐԻ ԴԻԻԱՆԵՆ)

Հազիւ աւարտած Մխիթար Արքաօր ծննդեան 300ամեակը, ահա քիչ ետք՝ դարձեալ փառաշուք տօնակատարութիւններ, ի պատիւ Կոստանդնուպոլսոյ երջանկալիչատակ Պատրիարք Յովհաննէս Կոլոտի, որ իրապէս եղած է եկեղեցական ու գրական մեծ անձնաւորութիւն մը, դառնալով ԺԸ. դարու մեր Վերածնունդի ջահերէն մէկը: Մխիթար Արքաօրը Արեւմուտքի մէջ կ'աշխատէր՝ իր ազգի զաւակներուն հոգեւոր լուսաւորութեան համար, հասցնելով աշակերտներ ու հրատարակութիւններ. նոյն գործը՝ նոյն հոգիով կը կատարէր Կոլոտ, Արեւելքի մէջ, հիմնելով դպրատուն, պատրաստելով նոր ու գիտնական սերունդներ, դառնալով մեկենաս հրատարակութիւններու, որոնց նպատակն էր միշտ հոգեւոր լուսաւորութիւնը իր ազգի զաւակներուն: Այսպիսի հոգիները կարելի է նմանցնել ասուպներու, որոնք կը յայտնուին յանկարծ՝ լուսաւորելով մութ երկիրն մը, յափըշտակելով ամէնուն հիացմունքը, առինքնելով հոգիները, իսկ անոնց անցքէն ետք՝ դարերով կը վերապրի անոնց անմահ յիշատակը, պաշտամունքի զգացումներ արթնցնելով մեր հոգիներուն մէջ:

Կոլոտ Պատրիարք ու Մխիթար Արքաօր ապրած են նոյն տարիներուն: Կոլոտ պատրիարքական աթոռ բարձրանալուն՝ Մխիթար դեռ հազիւ կը մտնէր Վենետիկ. Կոլոտի քսանեւհինգ տարուան պատրիարքութեան շրջանին՝ Մխիթար Վենետիկի մէջ կը շինէր Ս. Ղազարի վանքը. 1741ի Փետր. 12ին կը վախճանի Կոլոտ, իրմէ ութը տարի ետք ալ՝ Մխիթար Արքաօրը (1749 Ապրիլ 27):

Ապրած միաժամանակ՝ բայց տարբեր հոգեբու վրայ, զուգահեռ գործունէութիւն մը ունենալով հանդերձ, չեն ունեցած իրարու հետ

անմիջական յարաբերություններ։ Ասիկա արդեն և՛ այն դարուն հոգեբանություն, այն դարուն եկեղեցական ըմբռնումներուն, որ լիովին հասկանալի է երկու կողմէն ալ։ Դաւանաբանական հարցերը այնքան վառ էին՝ որ որեւէ շարժում ենթակայ էր սխալ մեկնաբանութեան, ինչպէս պիտի տեսնենք քիչ ետք, եւ հաւանօրէն այս պատճառով ալ թէ՛ Մխիթար եւ թէ՛ Կոլոտ զգուշացած են մտերմական յարաբերություններ մշակելէ, ինչ որ վերագրելու ենք իրենց հեռատեսութեան։

Այս բոլորով հանդերձ՝ անոնք իրարու հանդէպ չեն բռնած անտարբերութեան ուղին։ Մխիթարի աշակերտները, որոնք Պոլիս կը պաշտօնավարէին, պարբերաբար իրենց Հիմնադրին կը հասցնէին լուրերը, մանաւանդ որ Պոլսոյ Պատրիարքարանէն ներս՝ ծանօթներու բարեկամներ ունենալով, զէպքերու մանրամասնություններ կը հաղորդէին Մխիթարի. այդ նամակներուն շնորհիւ է որ այսօր գիտենք թէ ինչ էին Կոլոտ Պատրիարքի զգացումները Մխիթարի եւ անոր գործին ու հրատարակություններուն նկատմամբ։

Այս տեսակէտով՝ Ս. Ղազարու դիւանը կը դառնայ եզական աղբիւր մը, ուր պահուած կը գտնենք Կոլոտ իբր Պատրիարք, իբր լայնախոհ ու բարեկրօն անձնաւորություն, իբր խաղաղասէր ու հաշտարար եկեղեցական, իբր մեկենաս գիտութեան եւ հոգեւոր զարթոնքի։

Ակինեան¹ ու յատկապէս Կիւլէսէրեան² արդէն իսկ տուած են մեզի Կոլոտ Պատրիարքի գործունէութեան համապատկերը. այս տարի եւս Կոլոտի ծննդեան 300ամեակի առիթով յայտնուեցան նոր աղբիւրներ՝ անոր լուսաւոր գործունէութեան նկատմամբ³։ Ներկայ յօդուածով կու գանք մենք եւս քերելու մեր դոյզն նպատակով՝ պատմական ճշտումներու փնտռողով, դիւանական բաղմամբիւ նիւթերու նոր լոյսին տակ։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջին յիշատակություններ՝ որ կը գտնենք Ս. Ղազարու դիւանին մէջ, Կոլոտի մասին, 1714 թուականի 22 Յուլիսին գրուած նամակի մը մէջ, ուր կը պատմուի անոր գործունէութեան մէկ դժուար, պատրիարքական աթոռ բարձրանալէ առաջ. «Սուրբ Յա-

1. Հ. ՆԵՐՍԷՍ ԱԿԻՆԵԱՆ, Բաղէշի դպրոցը, Վիեննա 1952, էջ 360-372։
2. ԲԱՐԳԵՆ Ծ. ՎՐԴ. ԿԻԻԼԵՍԷՐԵԱՆ, Կոլոտ Յովհաննէս Պատրիարք, Վիեննա 1904։
3. ԲԱՄՊՈՒՓՃԵԱՆ ԳԵՈՐԳ, Նորայայտ վաւերագրեր Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի մասին, «Բազմ» ձև, (1977), թ. 1-2, էջ 281-297։ Յարգելի բանասէրը, յօդուածին վերջաւորութեան, տուած է մեզի դրեթէ ամբողջական մատենագիտութիւն մը Կոլոտի մասին։

կօթայ պարտքն մինչեւ ցայս վայր հինգ հարիւր քսակ եղեալ է. զՅոհաննէս Վարդապետն վէջիլ արարեալ, ընդ Իս(ր)այէլ Վարդապետի՝ որ այժմ Պօղոս Վրդ. կոչի, յղեալ են յԵրուսաղէմ, եւ գրեալ են նորա անդէն իւրաքանչիւր էսնաֆի կօնտակ՝ թէ ոչ հասանիք իմտաւ ի ձեռն դրամոց, այս ամ տաճիկը իւրեանց իւրացուցանեն զՍուրբ Յակօբ»⁴։

Կոլոտ յաջողութեամբ Երուսաղէմէն կը դառնայ Պոլիս, 1715ի Սեպտ. 9ին կը բարձրանայ Պոլսոյ պատրիարքական աթոռը, եւ դարձեալ բաժնելով Երուսաղէմի պատրիարքությունը Պոլսոյ աթոռէն՝ Ս. Յակօբի առաջնորդությունը կը յանձնէ Գրիգոր Վրդ. Շղթայա-կիրին։ Յաջորդաբար, երկու Պատրիարքները կը գործեն միշտ համերաշխօրէն, այնպէս որ անբացատրելի կը մնայ 1718ին Պոլիսէն գրուած նամակի մը մէջ տրուած տեղեկությունը՝ որ կ'ըսէ. «աստ եղեալ Երուսաղէմայ վանքին մեծաւորն՝ հաթտիչէրիֆ առաւ ի տաճիկէն, առ ի շինել յԵրուսաղէմ զՍուրբ Յարութիւնն՝ ըստ հաճոյից իւրոց. եւ լուեալ Յունաց եւ Հայոց պատրիարքաց՝ ելեալ աղաչեցին զնա ի չլինել, զի մի՛ խափանեսցի իւրեանց աղանդ. իսկ նա յանդիմանեալ զնոսա արգիլեաց»⁵։ Այս տողերը գրողը Ս. Ղազարու միաբաններէն Եղ. Մարկոսն է, որ գերի բռնուած էր Օսմանցիներէն՝ Մեթոնի մէջ, ուր մնացած էր պաշտպանելու համար Միաբանութեան առաջին վանքը. ապա տարուած էր Պոլիս, եւ հոն՝ բարեպաշտներու ողորմութեամբ ստացած է ազատություն։ Այսպիսի փոթորկումներու մէջ, դժուար է ստուգել թէ ո՞րքան հաւաստի աղբիւրներէ լսած է այս լուրերը ու գրի առած։

Կոլոտի պատրիարքությունը ընթացքին շինուած ու նորոգուած եկեղեցիներու մասին, Կիւլէսէրեան բաւարար տեղեկություն կու տայ մեզի⁶, սակայն՝ նոր վկայություն մը աւելի կը յստակէ «Շինող» Կոլոտի գործունէությունը։ Հ. Պօղոս, 13 Յունուար 1722ին կը գրէ Պոլիսէն. «Սամաթիեայու Սուրբ Գէորգայ ժամն սկսան շինել, որ մինչեւ կատարի 100 քսակ հազիւ բաւականանայ՝ ասեն. եւ այսու եղեւ վեց ժամ շինեցեալ՝ հրամանաւ այս վէջիւրիս. այսինքն՝ Աստուածածնայ, Լուսաւորչին, Պալատու, Սուրբ Գէորգայ, Թօփղա-փոյուն, Ղատրեօյին. վասն ամենեցուն զնաց, ասեն, մինչ 300 տօրպակ ստակ, եւ յամենեցուն առնեն զդրամս կամայ՝ եւ ակամայ»։ Տարի մը ետք, նոյն գրիչը կը հաղորդէ՝ թէ կրօնական խոռովությունները եւ անհամաձայնությունները դադրած են, որովհետեւ «Սամաթիեայու եկեղեցին վասն շինութեան իւրոյ ունի տակաւին 30 եւ 40

4. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 22 Յուլիս 1714ին, առ Մխիթար Արքայ, Մեթոն։
5. Եղ. Մարկոս, Պոլիսէն, 8 Դեկտ. 1718ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ։
6. ԿԻԻԼԵՍԷՐԵԱՆ, յիշ գրծ. էջ 29-30։

տօրպակ պարտք. մնայ եւ ոչ ժողովի՝ եթէ նոցա չարիս հասուցանեմք, զի շատ ողորմութիւն վասն շինութեան եկեղեցւոյն ուղղափառքն ետուն»⁷:

1723ի Օգոստոս ամսուն, Կոլոտ Պատրիարք կը յայտնուի եղական դէպքի մը մէջ: Հայ երիտասարդ մը, սիրահարուելով մեծահարուստ հրեայի մը աղջկան, կ'ուզէ ամուսնանալ. հրեաները մատնելով՝ խնդիրը կը հասցնեն նախարարութեան, պահանջելով երիտասարդին մահը: Հարցը տաճկական չլլալով՝ նախարարութեանն կը կանչուի Կոլոտ Պատրիարք, տալու համար սողոմոնեան վճիռը: Կոլոտ տեսնելով երկու երիտասարդներուն իրարու հանդէպ տածած անկեղծ սէրը՝ հրեայ աղջկան կ'առաջարկէ քրիստոնէութիւնը. իր իսկ ձեռքով նախ քան կատարէ մկրտութիւնը եւ արդարեալ պսակը⁸:

1725-1726 տարիներուն, Կարապետ Կաթողիկոսի Պոլիս դռներէն չըջանին, երկու Պատրիարքները, Կոլոտ ու Գրիգոր, իրենց ծախսով կը նորոգեն ու կը զարգարեն Իսկիւտարի հոգեւոյնը, որու նախկին բնակիչը եղած էր Կաֆայեցի Մարտիրոս Վրդ. Թաթար. ասոր մահէն ետք՝ բնակարանը մնացած էր խարխուլ վիճակի մէջ: Նորոգութենէն յետոյ՝ հոն կը բնակի նորընտիր Կարապետ Կաթողիկոսը, եօթը ամիս, եւ իր երախտագիտութիւնը ցոյց տալու համար՝ մէկուկէս «քէսէ» տալով կը դնէ հոգեւոյն որմնակից ծախուտունը, որ սահմանուած էր լլալու հիւանդանոց յոյներու. «առեալ խառնեցի վանատանն, կը դրէ Կարապետ Կաթողիկոս՝ ինքնակենսադրութեան մէջ, որ եւ նա Աստուծոյ է նորոգելոց, որպէս եւ խոստացաւ Պատրիարք անդրանիկս իմ (Յովհաննէս)»: Հին հոգեւոյն նորոգութիւնը, Կիւլէսէրեանի համաձայն⁹, պէտք է կատարուած ըլ-

7. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 2 Մարտ 1723ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

8. «Աստէն եղեւ զարմանալի իմ իրականութիւն, որ ոչ էր եղեալ ի ներքոյ իմիք Թադաւորութեան արեղական այլազգականի. զի Հայ երիտասարդի ընդ աղջկան իմիք հրէի փաթարի սիրահարութիւն ինչ ունեալ է երեք ամ յառաջ, եւ յայսմիկ ամի գործ ինչ որ յղացումն կոչի երեւեալ է ի աղջիկն: Եւ հրէայք իմացեալք են զայս բան, զնացեալք առ վէզիրն, որպէսզի զերիտասարդն ի ձեռն դրամոց սպանանել տայցեն: Իսկ վէզիրն առանձին խօսեցուցեալ է զերիտասարդն, նաեւ զաղջիկն, եւ տեսեալ է զերկոսեանս համակամ խնդրողք զիրեարս: Եւ յետոյ ի մէջ դիւանի նաեւ զերկու տաճիկ երիտասարդ կացուցեալ է վէզիրն եւ ասացեալ աղջկան. Կամի՞ս լինիլ տաճիկ եւ առնուլ դմին ի յերկուց տաճիկ երիտասարդացն: Եւ ասացեալ է աղջիկն. Ես կամիմ առնուլ զհայ երիտասարդն: Եւ վէզիրն ասացեալ է կարգացողաց ի դիւանի լինի՞ այս բան զի հայն ընդ հրէի ամուսնանայ(ց)է: Ասացեալք (են) կարգացողքն թէ լինի, զի երկոսեանն կեանուող են: Եւ կոչեցեալ վէզիրն զպատրիարքն՝ Հայոց եւ ասացեալ է նմա. զնա զսոսա ամուսնացո ըստ օրինակի ձերոյ: Եւ պատրիարքն Հայոց նախ մկրտտեալ զաղջիկն եւ արդարեալ զնոսա: Եւ վէզիրն 12 ոսկի շնորհեալ է աղջկան, եւ այժմ թէ հայք թէ հոռոմք եւ թէ տաճիկ հրէից խնամի ասենք. (Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 17 Օգոստ. 1723ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ):

լայ 1726ին. իսկ մեր ենթադրութեամբ՝ նոր դնուած շէնքին նորոգութիւնը Կոլոտ կատարած ըլլալու է 1727ի Ապրիլ ամիսէն ետք, երբ Կարապետ Կաթողիկոս թողլով Պոլիսը՝ վը մեկնի Թէքիրտաղ¹⁰:

1727ին, Ս. Գէորգ եկեղեցւոյ Թադականներէն Մաղաքիա անուանով մէկը (դպիր Ճէվահիրճեա՞ն) կ'ամբաստանուի՝ իբր 6000 դուռուշի եկեղեցւոյ արծաթեղէնները հալեցնելով իւրացնող. բայց Կոլոտ «պատրիարքն հոգւով չափ ջատագովելով զնա արդարս եցոյց առաջի ամենից եկեղեցեաց երեսփոխանաց»¹¹:

Չորս տարի ետք, 1731ի Յուլիս 10ի մեծ հրդեհին կը մոխրանայ Ս. Գէորգ եկեղեցին, նոր հող մը աւելցնելով Պատրիարք Հօր տեսքուն¹²: Նոյն մեծ հրդեհին զոհ կ'երթայ նաեւ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որուն վերաշինութեան հրամանը կ'առնուի մեծագոյն դրժուարութեամբ. վերաշինութիւնը սկսելուն ճշգրիտ թուականն է 13 Դեկտ. 1732. իսկ «Կապուտիկ (Վրդ.ն) գրադիր է ի վերայ մշակաց, որք վասն շինութեան եկեղեցւոյն բանին»¹³:

Յաջորդ տարիներէն, այսինքն՝ 1733էն մինչեւ 1740, Ս. Ղազարու դիւանին մէջ չունինք ուղղակի վկայութիւններ Կոլոտ Պատրիարքի գործունէութեան մասին: 1735 թուականին միայն, երբ կը վերարծարծին Յոյներու եւ Հայոց խնդիրները՝ նկատմամբ Երուսաղէմի Ս. Յակոբ վանքին, կը յիշուի՝ թէ Կոլոտ եւս կը ջանայ պաշտպանել ազգային շահերը, ենթարկուելով մեծամեծ ծախսերու (տե՛ս Թաւմաւնակագրութիւն):

Կոլոտ Պատրիարք հազիւ 63 տարեկան՝ կը դգայ կարծէք որ հասած է ատենը իր երջանիկ փոխումին, այնպէս որ մահէն ամիս մը առաջ «Յօհաննէս Վրդ.ն զպատրիարքութիւնն ետ Նալ Օղլու Յակոբ Վրդ.ին, իսկ Գրիգոր Վրդ.ն՝ Յարութիւն Վրդ.ին. բայց անուանք Յօհաննէս Վրդ.ին եւ Գրիգոր Վրդ.ին յիշին ի պատարագի»¹⁴:

Հ. Պօղոս Տայի Սխմոնեան, որ երկար տարիներ Պոլիսէն տեղական լուրերը կը հաղորդէր Վենետիկ, կու տայ նաեւ գոյժը Կոլոտ Պատրիարքի մահուան ու թաղումին, որուն մէջբերումը կ'ուզենք կատարել լրիւ. «Պատրիարք Կոստանդինիպօլիսոյ Յօհաննէս Վարդա-

9. Կիւլէսէրեան, յիշ. գրծ. էջ 30-31:

10. «Ի մերձակայ առուրս չուելոց է Կաթողիկոսն ի Թէքիրտաղ». (Հ. Մխիթար Վրդ. Պոլիսէն, 2 Ապրիլ 1727ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ):

11. Հ. Ստեփանոս Վրդ. Պոլիսէն, 6 Յունիս 1727ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

12. «Թօփխանային կողմէն սկսաւ հրդեհումն ի Յուլիսի 10, եւ այնքան տարածեցաւ զի բոլոր Ղաթարի գրեթէ ի մոխիր դարձաւ... Հայոց ժամն, սուրբ Գէորգայ ժամն, սուրբ Պետրոսի ժամն եւ այլք բնաւ տունք կիզեցան, բացի ի փէրչէմպէ պաղարիէն, մինչեւ ի Ղուլէպարուն պարիսպն». (Հ. Թոմաս Վրդ. Պոլիսէն, 21 Յուլիս 1731ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ):

13. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 24 Դեկտ. 1732ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

14. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 31 Դեկտ. 1740ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

պետն ի Փետրվարի ամիսն անդրափոխեցաւ աստի կենաց, ի ժամն Լուսաւորչաց եւ անդ թաղեցաւ. եւ ի տեղի իւր եղ Պատրիարք Նալ-օղլու Յակօբ վարդապետն: Արդ՝ յորում աւուր վա(խ)ճանեցաւ պատրիարքն, ի նոյնում աւուր հագաւ զկապայ ի դրանէ, եւ յօրէ յայնմանէ հրամայեցաւ ամենից եկեղեցեաց մինչեւ ի քառասուն օր բաց պատարադ առնել վասն հոգւոյ Պատրիարքին: Բայց ի Սուլումա նաստր Պասմաճը օղլու կոչեցեալ դժոխքերանն, ասելով օրինադանցութիւն՝ բաց պատարադ վատարելն ի քառասունորդական պահոց, զոց պատարադ արարեալ է: Եւ ի միւսում աւուր կոչեցեալ ի նոր Պատրիարքէն առնթերն, զբազում նախատինս ընկալեալ է ի նմանէ. նաեւ արգիլեալ զնա յաւիտեան յեկեղ(եց)ին ոչ զծանոցումն առնել եւ ոչ զքարոզ տալ. եւ եղբօր նորա Տէր Մարտիրոսին շնորհեալ զմի փիղոն, նախադահ արարեալ է զնա»¹⁵:

ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՈՒԼՆԵՑԻ ԵՒ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԻ

1725ի Հոկտեմբեր 10ին կը վախճանի էջմիածնի Աստուածատուր Կաթողիկոսը: Պոլսոյ մէջ, ընտրական սինհոդոսը կատարուելէ առաջ, Կոլոտ պէտք է մտովի պատրաստած ըլլայ յաջորդ Կաթողիկոսը. որովհետեւ 21 Դեկտ. 1725 թուակիր նամակի մը մէջ, որ դըրուած է սինհոդոսէն առաջ, կը կարդանք. «Հայոց կաթողիկոսն վախճանեցաւ եւ կամեցան ի տեղի նորա ի Գաղատիոյ եղեալ զկարապետ Վրդ.ն նասուցանել, Ստամպուլու պատրիարքին մարիֆաթովն»¹⁶: Այս նամակէն երկու օր ետք գրուած ուրիշ նամակէ մը կ'իմանանք որ նոյն տարւոյն (1725) Դեկտեմբերի վերջին չարթուան ընթացքին՝ «Ժողով դոյ աստ վասն կաթողիկոսի», եւ այս անգամ՝ փոխանակ մէկ անունի՝ կը շրջին երեք թեկնածուներու անուններ, այսինքն՝ «ոմանք զՄինաս Վրդ. Ակնցի, որ ի յառաջին ամի եկն ի Մօթօն ի Հոսմայու, ոմանք զԿարապետ Վրդ., ոմանք զՄանուէլ եւ ոմանք զայլ, եւ տակաւին չեն բացորոշեալ»¹⁷:

Կոլոտի հովանաւորութեամբ՝ սինհոդոսը կաթողիկոս կ'ընտրէ Գաղատիոյ առաջնորդը՝ Կարապետ, որ իր ինքնազիր կենսագրութեան մէջ՝ հետեւեալ կերպով կը նկարագրէ Կոլոտի ձեռնարկը. «... անտէրունջ մնացեալ թողուն սուրբ էջմիածնի, վասն որոյ արի եւ արդիւնական Յովհաննէս Վրդ.ն Բաղիշեցի... ի տաններորդ ամի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ... հոգ տարեալ եւս եւ հաւաքեալ զքահանայս եւ զիշխանս մեծի քաղաքին Կոստանդնուպոլսոյ»:

15. Հ. Պօղոս Վրդ. Պոլսէն, 10 Մարտ 1741ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:
16. Հ. Պօղոս Վրդ. Պոլսէն, 21 Դեկտ. 1725ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:
17. Հ. Միքայէլ Վրդ. Պոլսէն, 23 Դեկտ. 1725ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

սոյ, եւ խորհուրդ ի մէջ առեալ վասն սուրբ էջմիածնի թէ զո՞ կոչեցեն ի Կաթողիկոսութիւն»¹⁸: Ընտրութիւնը կատարուած օրերուն՝ Կարապետ Վրդ. Ուլնեցի թեմական այցելութեամբ կը գտնուէր Ղաւահիսար, ուր «եկին յանկարծ արք երեք ի Բիւզանդիոյ, վարդապետ մի ի վարդապետաց, քահանայ մի ի քահանայից եւ իշխան մի ի իշխանաց, ունելով ընդ ինքեանս արդ եւ մահսար մեծ՝ լի վնքօք քահանայից եւ իշխանաց առ նուաստութիւնս իմ, որպէսզի վաղվադիցեմ իջանել առ նոսա ի քաղաքն մեծ»¹⁹:

Բոլոր այս կազմակերպութիւնը կը պարտինք Կոլոտի, որ իր վրայ առած եկեղեցւոյ հոգը՝ նուիրուած է անոր բարեգործութիւն եւ կարգաւորումին:

Կարապետ Եպս. կը մտնէ Պոլիս, ուր կը հասնին «մեծամեծ եպիսկոպոսունք ի յարեւելից եւ ի բոլորից, ուր եղեւ կոյտ եւ բաղմութիւն եպիսկոպոսաց, եւ միաբանեալք ընդ պատրիարքին եւ քաղաքացւոց, քահանայիցն եւ իշխանաց եւ ամենայն ժողովրդոցն ... օծին դմեղաւորս Կաթողիկոս Ամենայն Հայոց»²⁰: Տրուած նկարագրութեան մէջ, դիտելի է Կոլոտ Պատրիարքի դերը, որ տակաւին եպիսկոպոս իսկ չեղած՝ կը նկարագրուի իբր առաջնորդ կամ իբր պատկառելի եկեղեցական մը, որ իմաստութեամբ գիտէ ուղղել բաղմութիւնը: Կոլոտի այս ցայտուն յատկութիւններն ու եկեղեցասիրութիւնը հմայած ըլլալու է բաղմութիւնը եպիսկոպոսներու, որոնք Կարապետ Կաթողիկոսի մահէն ետք՝ պիտի սկսին մտածել իր վըրայ, իբր արժանաւոր յաջորդի. «յաւուրս յայտոսիկ (1729ին) լուր եկն՝ թէ Կարապետ Կաթողիկոսն փոխեցաւ. ասեն թէ կա՛մ Փաթրիքն (իմա Կոլոտ Պատրիարքն), կամ Երուսաղ(ե)մայ առաջնորդն (իմա Գրիգոր Շղթայակիր), կամ Մօսէս Վրդ. էնկիււրու առաջնորդն նասուցանեն»²¹:

Կարապետի կաթողիկոսական օծումը կը կատարուի 1726ի Փետրուար 27ին, քառասունորդաց երկրորդ կիրակին: Նոյն օրը, Կոլոտ Պատրիարք, ի յարգանս նորընծայ Կաթողիկոսին, «ծանուցումն արար՝ թէ ո՛վ ոք յաւուր յայտիկ խոստովանի եւ հաղորդի, ամենից մեղաց թողութիւն առնու»։ Ինչպէս նաեւ կը հրամայէ «ծոմարձակ լինել եւ գինի ըմպել եւ բաց պատարադ առնել ի նոյն եկեղեցի. եւ այս՝ ինն օր»²²:

Կիւլէսէրեանի համաձայն՝ այս թուականէն «երեք օր ետք, Հա-


18. ԿԱՐԱՊԵՏ ԿԹ. ՈՒԼՆԵՑԻ, Վարդ իմֆագիր. 20. Ս. Ղզ. Թ. 2712, էջ 9-10:

19. ԱՅՊ, էջ 10-11:

20. ԱՅՊ, էջ 11:

21. Հ. Միքայէլ Վրդ. Պոլսէն, 23 Դեկտ. 1729ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ: Փակագիծերու մէջ տրուած բացատրութիւնները՝ մեր կողմէ:

22. Հ. Միքայէլ Վրդ. Պոլսէն, 23 Մարտ 1726ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:



1678 - 79

յոց Կաթողիկոսը իր եպիսկոպոսական առաջին ձեռնադրութիւնը ըրաւ մայր եկեղեցւոյ մէջ, Հայոց Պատրիարքը բարձրացնելով եպիսկոպոսական աստիճանին»²³։ Կարապետ Կաթողիկոս իր ինքնագիր կենսագրութեան մէջ կը շեշտէ թէ իր օծումը կատարուած է Հայոց «ՌՃՀԵ (1726) թուին, յերկրորդում աւուր շաբաթու աղուհացից, յաւուր կիւրաքէի, որ օր ժէ (17, հին տոմարով) էր Փետրուար ամսոյ. եւ ի միւսում աւուր երկուշաբթի, որ էր Փետրուար ամսոյ ժը (18), ի մէջ նոնոյ եկեղեցւոյ եւ ներ նույնում բազմութեան... զՏէր Յովհաննէս աստուածաբան վարդապետն ձեռնադրեալ օծի արքեպիսկոպոս մեծի քաղաքին Կոստանդնուպոլսոյ»²⁴։ Անտարակոյս, զրէի վրիպակ մըն է ծերունի Կարապետ Կաթողիկոսի գրածը, որ շարադրած է իր կենսագրութիւնը՝ այդ դէպքերէն տարի մը ետք (1 Սեպտ. 1727ին), յիշողաբար։ Մինչդեռ նոյն օրերուն գրուած նամակի մը մէջ, բացայայտ կերպով կը կարդանք. «յետ երկոյ աւուրց (օծմանն Կարապետ Կաթ.ի) զպատրիարքն արար եպիսկոպոս»։ Եւ նոյն նամակին համաձայն՝ կաթողիկոսական օծումի արարողութիւնը «յերեք ժամու գիշերունն ակսան, մինչեւ էանց կէս գիշեր»²⁵, այնպէս որ դժուար է հաւատալ՝ թէ յաջորդ օրը վատարուէր Կոլոտի ձեռնադրութիւնը։

Կարապետ Կաթողիկոս, իր կենսագրութեան մէջ, մեծ գովասանքով եւ հիացումով կ'արտայայտուի Կոլոտի մասին. «իւր կաթողիկոս ընտրուելու պարագան նկարագրած ատեն՝ կը յիշէ «արի եւ արդիւնաշատ Յովհաննէս Վրդ.ն Բաղիշեցի, որ ի դասատանէն Ամիրտօլու... որ է աշակերտակից Գրիգորի սրբազան պատրիարքի սրբոյ Երուսաղեմի, որ երկուքին պայծառագոյն ջահքս սրբոյ եկեղեցւոյ, շնորհօքն Աստուծոյ զօրացեալք մտին ի ներքոյ վեցհարիւր քսակ պարտուցն սրբոյ Երուսաղեմի, եւ Աստուծով տարովս այսու վճարեցին զամենայն, վասնդի եւ պատրիարքն միաբան է եւ մեծ ջատագով սրբոյ Աթոռոյն Երուսաղեմի»²⁶։ Կարապետ Կաթողիկոս Կոլոտին կը շնորհէ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը՝ «ըստ խնդրոյ վեցից ճօմահաթից, քահանայից, իշխանացն եւ ժողովրդոց», որոնց վրայ կ'աւելնայ նոյն ինքն Կոլոտի անձին վկայութիւնը. «քանզի այն տասն ամ էր որ պատրիարք էր մեծի քաղաքին, եւ տակաւին չեւ էր լեալ եպիսկոպոս՝ վասն բազմութեան զբաղանացն... թէ՛ վասն կառավարութեան պատրիարքութեան եւ թէ՛ վասն գործակալութեան սըրբոյ Երուսաղեմի, ոչ կարելով ելանել ի Սուրբ Էջմիածին»²⁷։

23. ԿԻԻԼԵՍԻՐԵԱՆ, յիշ. գրծ. էջ 27:

24. Ձեռ. Ս. Ղազարի, թիւ 2712, էջ 24:

25. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն, 23 Մարտ 1726ին, առ Միւթար Աբբայ, Վենետիկ:

26. Ձեռ. Ս. Ղազարի, թիւ 2712, էջ 9-10:

27. Անդ, էջ 12:

Նոյն տարին, 1726ին, շատ հաւանաբար Օգոստոս ամսուն մէջ, Կարապետ Կաթողիկոս՝ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ կը կատարէ ուրիշ եպիսկոպոսական ձեռնադրութիւններ ալ, առնթով երակայութեամբ Կոլոտ Պատրիարքի։ Կիւլէսէրեան չի յիշատակեր թէ ինչ աղբիւր գործածած է. կ'ըսէ միայն թէ ձեռնադրեալները երեք էին, Յովհաննէս Վրդ. (Հաննէ), Կոլոտի աշակերտներէն՝ Թոմաս Վրդ., եւ Կոլտինայի առաջնորդը՝ Մարտիրոս Վրդ.²⁸։ Կարապետ Կաթողիկոս կը յիշատակէ միայն առաջին երկուքին անունները, լռելով երրորդինը. Հաննայ ու Թոմաս Վրդ.ները կ'անուանէ «հոգեկիցք նախագոյն իրերաց», որովհետեւ երկուքին ալ վարդապետական դաւադանը շնորհուած է Կոլոտէ. «առնելով զծայրագոյն դաւադանս մեծի վարդապետութեան ի միջէ ձեռանէ, այսինքն՝ յանդրանկանս իմոյ պատրիարքէն»։ Կը ձեռնադրէ զանոնք եպիսկոպոս՝ որպէս օգնական երկու պատրիարքներուն, Հաննայ՝ Գրիգոր Շղթայակիրի, եւ Թոմաս՝ Տեառն Յովհաննէսի պատրիարքի եւ արքեպիսկոպոսի Կոստանդնուպոլսոյ, իմոյս անդրանկի... զորս բարով վայելեացն զմիմեանս»²⁹։

Չոյզ (կամ երեք) եպիսկոպոսներու ձեռնադրութեան արարողութիւնը նկարագրուած կը գտնենք նաեւ Ս. Ղազարու դիւանի նամակներէն մէկուն մէջ, ուր կը յիշատակուի ոչ թէ երկու կամ երեք, այլ չորս եպիսկոպոսներու ձեռնադրութիւն. բայց վը պակսին ձեռնադրեալներու անունները։ Արարողութեան ընթացքին՝ ուշադրաւ կը դառնայ Պատրիարք Հօր դէմքը. «Կաթողիկոսն ի Լուսաւորչայ եկեղեցին զչորս եպիսկոպոսունս ձեռնադրեաց՝ վեց եպիսկոպոսօք. ես եւս գնացի, տեսի զամենայն արարողութիւնս. էի ի տան Հաճի Պալինց, որ ի բաղն եկեղեցւոյն հայի, եւ ամենայն ինչ անդ եղեւ։ Եւ եւս Պատրիարքն (Կոլոտ) էր որպէս յառաջակայ եւ յառաջ ածող արարողութեանց, կալով մերձ Կաթողիկոսին. զդաւանութիւնն եւս նա խնդրեաց ի նորնծայ եպիսկոպոսաց այսու ձեւով. Ընդունի՞ք եւ դաւանի՞ք զայն ամենայն՝ զոր ինչ ընդունի եւ դաւանի մերս Հայաստանեայց եկեղեցի. նզովէ՞ք եւ հերքէ՞ք (ք) զայն ամենայն՝ զոր նզովէ եւ հերքէ մերս Հայաստանեայց եկեղեցի»³⁰։

Կոլոտ Պատրիարքի արժանիքներէն մէկն ալ եղած է հանել տալ արքունական յատուկ հրամանագիր, որպէսզի Կարապետ Կաթողիկոս ազատօրէն կարենար կիրարկել իր հոգեւոր իշխանութիւնը, ինչպէս նաեւ որպէսզի ստանար նիւթական ապահովութիւն։ Կարապետ Կաթողիկոս մասնաւոր կերպով կը շեշտէ կարծէք այս վէտը, դուրս

28. ԿԻԻԼԵՍԻՐԵԱՆ, յիշ. գրծ. էջ 27:

29. Ձեռ. Ս. Ղազարի, թիւ 2712, էջ 14:

30. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն, 1 Սեպտ. 1726ին, առ Միւթար Աբբայ, Վենետիկ:

ցայտեցնելով Կոլոտի դերը՝ այս դործին մէջ. «սոյն այս հոգեծին նախնի անդրանիկ նորընծայ պատրիարք որդեակս իմ, խորհրդակցութեամբ իշխանացն ամենեցուն, հանին հրաման արքունական վասն մեր՝ յոյժ պիտանի եւ կարեւոր խեթկիչ բռնաւորաց, զի մի՛ արդեւ լողք լինիցին հոգեւոր հրամանաց եւ դատողութեան մերում եւ կամ նեղեցցեն զնուիրակունս մեր»³¹ :

ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԻԻ ԳՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ԺԸ. դարու առաջին կէսին՝ Պոլսոյ մէջ նշմարուող գրական նոր կենսունակութեան մէջ ալ Կոլոտ ունեցաւ իր դերը: Թէեւ չունի անձնական երկեր, սակայն գիտցաւ ստեղծել ակնառու դործ մը՝ հիմնելով դպրատուն, անձամբ հոն դասաւանդելով ու պատրաստելով ձեռնասուն աշակերտներ՝ որոնք եղան Թարգման եւ իրադործողներ իրենց վարդապետին զգացումներուն եւ փափաքներուն:

Առանց փոքրոգի նկատողութիւններու, Հայրապետի մը յատուկ հոգիով ուղեց մերձեցնել Արեւելքը Արեւմուտքի, իր ազգի զաւակներուն ձեռքը տալով լատին հեղինակներէ շարադրուած աստուածաբանութեան գիրքեր: Այս նպատակով՝ Կոլոտ իր քով պահած է Փրոփականտայի նախկին աշակերտ Խարբերդցի Ղուկաս Վրդ. Աբրահամեանը, որ քաջ հմուտ էր լատին եւ իտալերէն լեզուներուն, ու անոր ձեռքով լոյս ընծայած է բազմաթիւ Թարգմանութիւններ:

1721ին Ղուկաս Վրդ. կը գտնուի Պոլիս, որ կը «Թարգմանէ սրբային Թօմայու Աքունանցուոյն Խորհրդոց հատորն»³²: Ուրիշ նամակի մը մէջ, կ'ըսուի թէ «Ղուկաս Վրդն. զԽորհրդոց գիրքն սրբային Թօմայի ի տունս եւ ի շուկայս Թարգմանելով, զմեծ համբաւ ստացեալ է»³³: Յայտնի է թէ Ղուկաս Վրդ. ո'ր տարին սկսած է Թարգմանել՝ Կոլոտ Պատրիարքի մեկենասութեամբ. 1729ի Նոյեմբեր ամսուն, «Տէր Ղուկասն այժմ ոչ գոյով ընդունեցեալ ի տունս ուղղափառաց, մերձ պատրիարքին է, նմա Թարգմանէ զմեկնեցեալ աստուածաշունչ լաթինացոց»³⁴: 1732ին դեռ զինքը կը գտնենք Կոլոտի քով. «Տէր Ղուկասն ոչ ունելով զայնքան տունս, բնակի այժմ ի Յուսկուտար՝ ի վանքն Հայոց, ուր Թարգմանէ զգիրքս պատրիարքին»³⁵:

Ղուկաս Վրդ.ի կողքին կը գտնենք նաեւ Մաղաքիա դպիր Ճէփահրճեան, որ ինքզինքը կը ասի ի կոչել «վերջին բնակիչ Կոստանդնուպոլսոյ»: Սա եւս ունի նամակ մը, գրուած Մխիթար Աբրահամ, Վենետիկ:

31. Ձեռ. Ս. Ղազարի, Թիւ 2712, էջ 12:

32. Հ. Պողոս Վրդ. Պոլիսէն, 28 Մարտ 1721ին, առ Մխիթար Աբրայ, Վենետիկ:

33. Հ. Պողոս Վրդ. Պոլիսէն, 17 Յունիս 1721ին, առ Մխիթար Աբրայ, Վենետիկ:

34. Հ. Պողոս Վրդ. Պոլիսէն, 15 Նոյեմբ. 1729ին, առ Մխիթար Աբրայ, Վենետիկ:

35. Հ. Պողոս Վրդ. Պոլիսէն, 13 Ապրիլ 1732ին, առ Մխիթար Աբրայ, Վենետիկ:

3 Հոկտ. 1731 Թուակիր, ուր կու տայ հարուստ ծանօթութիւններ նկատմամբ Պատրիարք Հօր. «Ամենապատուելի Վեհա Պօլսոյս, զինի Թարգմանեցուցանելոյ գրեհանս յոմանս, յաւել եւս եւ Թարգմանեցոյց զՍօֆն. եւս զգիրքն զայն՝ որ կոչի Սիվա Ալեկօրիարում, այսինքն՝ Անտառ Այլաբանութեան, մեծագոյն գործ եւ յաճախ, որ է երկու փերթ մեծ գիրք: Առաջին հատորն վճարեցաւ, մնաց երէկորդն. լատինականն ոչ գտանելով աստ, եւ թէ միւս հատորն եթէ վճարիցի, իրաւի մեծ իմն օգուտ լինելոց է մերայնոց ազգիս ուսումնասիրաց»: Ապա Մաղաքիա փափաք կը յայտնէ որ այս երկորդ հատորին Թարգմանութիւնը ստանձնէ Պետրոս Վրդ. Թիֆլիսեցի եւ կամ ուրիշ ոեւէ մէկը, որու համար պատրաստ է ընել ամէն հատուցում: Այս նամակին պատասխանը թէեւ տուած է Մխիթար, 28 Յունիս 1732ին, եւ մեր տրամադրութեան ունինք անոր սեւագիր օրիւնակը, սակայն կիսատ ըլլալով՝ չենք գտներ այն հատուածը, որ մեղ կը հետաքրքրէ: Քննելով ամբողջ նամակին պարունակութիւնը, դժուար է որ Մխիթար յանձն առած ըլլայ առաջարկուած գործը, որովհետեւ Մաղաքիայի առջեւ կը դնէ վանքի նոյն աստուածաներէն կացութիւնը, թէ Մեթոնէն փախչելէ ետք՝ այժմ զբաղած է նոր վանքը կառուցանելով, ու հազիւ թէ սկսած է նուիրուիլ ներքին կազմակերպութեան, նոր սերունդի դաստիարակութեան. գործ մը՝ որ Թոյլ չէր տար ձեռնարկելու նոր Թարգմանութեան մը:

ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԻԻ ԴԻՐՔԸ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՄԵՋ

ԺԸ. դարու եկեղեցական պատմութիւնը լեցուն է ելեւէջներով, յատկապէս Պոլսոյ մէջ, որ նկատուած էր հայութեան սիրտը: Կոլոտի պատրիարքութենէն առաջ՝ հոն շատ բուռն էր պայքարը երկու հատուածներու միջեւ, իսկ եւ ֆրէնկ յորջորջումով ծանօթ. իշխանութիւնը ըլլալով Պատրիարքին ձեռքը, անկէ վախում ունէր շատ բան: Դժբախտաբար, եղբայրասպան կռիւներ միթաղնած են հորիզոնը: Դաւանաբանական բուռն վէճեր յաճախ եկած են խոռովել Ժողովուրդն ու եկեղեցականները, վերանորոգելով վէրքը՝ աւելի կամ նուազ սաստկութեամբ:

Լատին միսիոնարները՝ հերձուածող ու նոյնիսկ հերետիկոս նկատելով հայ եկեղեցին՝ ամէն կերպով կ'արգիլէին իրենց հաւատացեալներուն որեւէ հաղորդակցութիւն անոնց հետ. արգիւրուած էր յաճախել հայոց եկեղեցիները եւ մասնակցիլ անոնց՝ յաստուածալինս: Կաթողիկէ դաւանանքին յարող հայ Ժողովուրդը կ'իյնար լատին եպիսկոպոսի իրաւասութեան ներքեւ, կը յաճախէր լատին եկեղեցիներ, եւ կամ կաթողիկէ կղերականներ կը շրջէին իրենց հե-

տեւորդ հաւատացեալներուն տունները, հոն տեղւոյն վրայ մատակարարելու համար Ս. Խորհուրդները, մատուցանելու պատարագ, ինչպէս նաեւ կատարելու ուրիշ զանազան բարեպաշտական ջերմեռանդութիւններ:

Պոլսոյ Պատրիարքները չէին կրնար հանդուրժել նման տեսարանի, իրենցը կը համարէին ամբողջ հայ ժողովուրդը, կը ստիպէին որ ամէն հայ՝ առանց դաւանանքի խտրութեան՝ յաճախէ հայ եկեղեցին. եւ այս նպատակին հասնելու համար՝ կը դործադրէին իրենց պատրիարքական իշխանութիւնը, ստանալով յատուկ ֆերմաններ, որոնց զօրութեամբ կը պատժէին զանցառուները, նոյնիսկ նետելով բանտ, ենթարկելով չարչարանքներու եւ կամ թիավարութեան:

Կոլոտի պատրիարքական ընտրութեամբ՝ խնդիրները չլուծուեցան, մնաց հալածանքը՝ յատկապէս կղերական դասին դէմ, որու գլխաւոր ներկայացուցիչներն էին Հռոմի Փրովականտայի հայ աշակերտները:

Մխիթար Աբբահայր իր հեռատեսութեամբ եւ ողջմտութեամբ տեսած էր կացութեան անելի վիճակը: 1718ին երբ դացած էր Հռոմ՝ պաշտպանելու Միաբանութիւնը, եղած ամբաստանութիւններուն դէմ, դործը աւարտելուն՝ մնացած էր Հռոմ, ճիշտ այս խնդրին լուծում մը գտնելու մտադրութեամբ, բացատրելով պատկան իշխանութիւններուն՝ հայ եկեղեցւոյ իրական դիրքը, ժողովուրդին հոգեկան սրահանջները. ու վերջապէս՝ զանազան լուսարանութիւններ տարէ ետք՝ կըրցած էր ստանալ քահանայապետական յատուկ հրամանագիր, որու զօրութեամբ՝ հայ «ուղղափառ» կոչուած վաթողիկէ ժողովուրդը կրնար յաճախել Հայոց եկեղեցիները:

Մխիթար Աբբահայր, 1718ին, կը դառնար Վենետիկ. 1720ին, ստացած հրամանագիրը տալով իր աշակերտներէն երկու հոգիի ձեռքը՝ Հ. Գաբրիէլ ու Հ. Փիլիպպոս Վրդ.ներուն՝ կը ղրկէր զանոնք Պոլիս, ուր կը հասնէին Ապրիլ ամսուն, եւ անտեղեակ քաղաքին ներքին կացութեան՝ կը շրջէին համարձակ, առանց դիտնալու թէ հալածանքը բոլորեալ էր:

Մխիթար Աբբահայր այդ լուսաւոր ձեռնարկը, դժբախտաբար, չէր հասներ իր նպատակին, տեղի տալով սխալ մեկնաբանութիւններու: Պոլսոյ լատին եպիսկոպոսը այդ հրամանագիրին մէջ կը տեսնէր խախտումը արեւմտաւոր աւանդական համոզումներուն, որոնք բացարձակ էին:

Տարակոյս չունինք թէ լուրը հասած ըլլայ նաեւ Կոլոտ Պատրիարքին, որ շարունակելով հանդերձ հսկել իր հօտին եւ անոր իրաւունքներուն վրայ, մեղմ աչքով կը տեսնէր նայիլ Մխիթարի աշակերտներուն:

Այս բոլոր մանրամասնութիւնները նկարագրուած կը գտնենք Հ. Գաբրիէլի մէկ նամակին մէջ, գրուած 13 Յուլիս 1720ին, ուր կ'ըսէ. «եկեղեցւոք առ ոմանս զրաբանութիւնս եպիսկոպոսին եւ եպիսկոպոսականացն. ասեն՝ թէ են հերետիկոսք վասն մեր, զի յղեմք զժողովուրդն ի ժամն հայոց, թէ յանձնեալ է Աբբայն փաթրիարքին զաշակերտսն, զի դործակցութեամբ նորա զուղղափառսն ի ժամ հայոց ներմուծեան, վասն որոյ յարուցանել ետուն զհալածանս ի վերայ ուղղափառաց: Վասն որոյ ասէ եպիսկոպոսն. ևօն է փէն լոնօ կուէստա փէնսէկուցիօնէ (non è per loro questa persecuzione = այս հալածանքը անոնց համար չէ — Հ. Ս. Ճ.). քանզի մեք գոլով անծանօթք՝ տակաւին շրջեաք, մինչ Մինաս Վրդն., Յօհան Վրդն. եւ այլք հնազոյնք թագուցեալ էին զանձինս իւրեանց վասն հալածանաց»:

Թէ Մխիթարի աշակերտները դաշինք ունէին Կոլոտ Պատրիարքի հետ, թէ Կոլոտ չէր հալածեր զիրենք, խօսքեր են՝ որոնք տարիներ ամբողջ կը շրջէին: Այսպէս, յաջորդ տարին, 1721ին Հ. Պօղոս կը գրէ. «վասն մեր ասացեալ են՝ թէ մօտօնցիք համարձակք չըջալին, ունին ընդ պատրիարքին դաշն ինչ, եւ բարեկամք են իրերաց, վասն որոյ ոչ ըմբռնէ զնոսա»: Հ. Պօղոս առարկողի մը կը պատասխանէ ըսելով. «եթէ կամի ստոյգն իմանալ, որպէս ինքն կարծէ, մատնեսցէ զմի ոք ի մէջն ի ձեռն պատրիարքին, եւ այնու փորձեսցէ զիւր կարծիք»³⁶:

Գործնականին մէջ, հալածանքը «ուղղափառ»ներու դէմ ըլլալով՝ Մխիթարի աշակերտներուն ալ դէմն էր: Սակայն տեսնենք թէ ինչ հոգեբանութեամբ կը դործէր Կոլոտ Պատրիարք՝ այս բոլոր վէճերուն եւ կռիւներուն ընթացքին:

Դժուարին է ընդունիլ որ Կոլոտ Պատրիարքի նման հաւասարակշիռ հոգի մը՝ այս հարցին շուրջ՝ դործէր այնպիսի մտայնութեամբ մը, որ հակասէր իր առհասարակ հաշտասէր ու շինարար նկարամը, որ հակասէր իր առհասարակ հաշտասէր միանգամ ընդ միշտ դրին: Դժուարին էր նաեւ որ Կոլոտ յաջողէր միանգամ ընդ միշտ յանկարծակի վերջ տալ հալածանքի երկարամեայ հոգեբանութեան, ի հեճուկս իր շուրջիներուն ճնշիչ թելադրանքներուն: Միւս կողմէ՝ չէր կրնար նաեւ բոլորովին աչք դոցել որ «կաթողիկէ» կամ «ուղղափառ» համայնքը դործէր բացարձակ ազատութեամբ, եւ հայ ժողովուրդին մէկ զանգուածը ենթարկուէր լատին կարգաւորներու իրաւասութեան:

Փափուկ էր, ուրեմն, Կոլոտ Պատրիարքի դիրքը. մէկ կողմէն՝ պահել անցեալ աւանդութիւնը, միւս կողմէն՝ դործել խմբակի մը հետ, որու պաշտպան էր լատին եպիսկոպոսը, ու ասոր կողքին՝ եւրոպացի դեսպանները, որոնք ազդու ձայն ունէին պետութեան առջեւ:

36. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 28 Մարտ 1728ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

Թափանցող եւ ըմբռնող միտք, Կոլոտ կ'ընտրէ միջին ու բարեխառն ճամբայ մը. ստեղծել այնպիսի պայմաններ՝ որ զիջողութիւնը ըլլայ երկուստեք, առանց վնասելու երկու կողմերուն ալ համոզումներուն: Այս ուղղութեամբ կը գործէ Կոլոտ, բնականաբար, որքան որ կարելի էր, երբեմն յաջողելով ամբողջովին դադարեցնել խռովութիւնը, երբեմն տեղի տալով փոթորիկներու, որոնք թերեւս մասամբ ալ անխուսափելի էին՝ նկատած բոլոր պարագաները:

Գործնականին մէջ, Կոլոտ կը ստիպէր որ «կաթողիկէ» կղերը այլեւս չըջէր տունէ տուն՝ մատակարարելու խորհուրդները. կ'արգելէր նաեւ որ չյաճախէին անոնք լատին եկեղեցիներ, այլ ամէնքը հաւաքուէին հայ եկեղեցին: Ասով հանդերձ՝ կը լսէր անոնց առարկութիւնները, տեղիք կու տար՝ ի սէր խաղաղութեան, վերցնելով նշովքները՝ որ կը կարգացուէին եկեղեցիէն ներս:

1727 թուականն ենք: Հ. Եղիա կը վկայէ. «հոգունակաբար թէ կամենայ պատրիարքն, ներ միոյ աւուր կարէ զբնաւս (կարգաւորող զաւրաւագ) ըմբռնել եւ յղել ի թին. բայց թոյլ տալոյն պատճառն այն է՝ զի կամի բառնալ զերեք տունն Ով հրաշալւոյն, որպէսզի այնու համարձակա դայցեն յեկեղեցին Հայոց եւ ելցեն քահանայք ի տանց եւ դադարեցնեն ի յանկողնատեղիս պատարագելոյ եւ համարձակ քարոզիցեն յեկեղեցիս հայոց»³⁷: Այս եւ ասոնց նման ուրիշ վըկայութիւններու համաձայն՝ կը յայտնուի խաղաղասէր Կոլոտը, որու դիտաւորութիւնն է հաւաքել ամբողջ հայութիւնը՝ նոյն եկեղեցւոյ մէջ, որպէսզի այսպէս ինքը եւ շուրջիները մտնեն բարոյական ստիպողութեան մը ներքեւ՝ ուղղելու ինչ ինչ կէտեր, որոնք անհաճոյ էին հակառակ կողմին: Կոլոտ Պատրիարքի աջ բաղնակը, որու անունն է Շապանօղլի, կը վստահացնէ Մխիթարեան Միաբանութեան անդամները՝ Կոլոտի ուղիղ դիտաւորութեան մասին: Շապանօղլի կ'ըսէ. «Փաթրիքն զայս Ֆերման նոր... վասն այն առնէ, զի դադարեցուցանելով զմարդիկ զնալոյ յեկեղեցիս Ֆրանգաց, լիցի առիթ, որպէսզի բարձրեն զնոյն»³⁸: Կոլոտի այս գործելակերպին տեղեակ ու հաւան է նաեւ լատին եպիսկոպոսը, որ «գովարանէ զնոսա, այսինքն՝ զփաթրիքն եւ զՇապանօղլին — կը շարունակէ դրել նոյն նամակը — զի աւելի քան զմեզ եւ համարձակ զնան եւ դան մերձ եպիսկոպոսին. նաեւ անցեալ Զատիկի դպարինս եւս տարին ընծայ»³⁸: Հ. Ստեփանոս Եւդոկիացի, յատուկ կերպով կը նկարագրէ Կոլոտի դիրքը՝ այս խնդիրներուն մէջ, շեշտելու համար անոր ունեցած խաղաղասէր հոգին, երեւոյթները փրկելու մտահոգութիւնը՝ որպէսզի չվրդովի սէրը. ան կը գրէ. «(Կարապետ) Կաթողիկոսն եւ իւր ա-

37. Հ. Եղիա Վրդ. Պոլիսէն, 2 Յունուար 1727ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ:

38. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 15 Յունուար 1727ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ:

թոռակալն Մանուէլ Վրդ. եւ Պատրիարքն, եթէ զիր ինչ գանգատական շուրջ զուղղափառութեամբ եւ կամ զուղղափառօք լսեն, յառանձնան(ան) նախ եւ ի խորհուրդ մտանեն. յետոյ ելեալ ասեն ցըղանդատօղս. Դուք զնացէք ի գործս ձեր, մեք հոգալոց եմք: Յետոյ մինն, այսինքն՝ Պատրիարքն կամ միւսն, այսինքն՝ Մանուէլ Վրդ. նստակալ ինչ ի դաս քաշեն զուղղափառսն յատենի, ասելով. ջանացէք կալնուլ զայնպիսիսն. երբեմն զայս՝ թէ զի՞նչ է այս աղմուկն, որ ոմանք ասէք՝ մի բնութիւն, եւ ոմանք՝ երկու, արարէք զխաղաղութիւն ի միջի ձերում՝ վասն սիրոյն Աստուծոյ, շատ է չարն եւ վիշտն եւ պատիժն ազգին մերոյ: Եւ այսպիսի ... բանիւք՝ երկուց կողմանցն եւս միշտ ջանան հաճոյացուցանել զինքեանս, եւ նման թաղաւորին եւ եպարքոսին՝ ջանան խափանել զչարն»³⁹:

Դարձեալ կը յայտնուի խաղաղասէր ու զիջող Կոլոտը, երբ մըտածութենէն կ'անցնի գործի. «նշովքն այսմ տարւոյ (1727) ի խալթիայ ոչ կարգացին»⁴⁰. Իսկ թէ Կոլոտ «ոչ դադարի ի մէջ քարոզի վատաբանել եւ նշովել զուղղափառսն երբեմն երբեմն», այս եւս մեր նամակագիրը կը վերագրէ պարագաներու, այսինքն՝ «դրդմամբ հակառակորդաց»⁴¹:

Ճիշտ այդ օրերուն է որ կը պատահի նշանակալից դէպք մը, որ արդարեւ եզակի է այդ դարուն եւ այդ օրերուն համար: 1727ի Մարտ 30 (կամ 31) ենք. Պոլսոյ լատին եպիսկոպոսը այցելութեան պիտի երթայ Կարապետ Կաթողիկոսին: Ու ահա Կոլոտ «Պատրիարքն մեծաւ վերընդունելութեամբ, բաղնակին քահանայից եւ սարկաւագաց, շուրջառիւք եւ բուխառօք եւ երգօք, ընդ առաջ ելեալ ընկալաւ, եմոյժ յեկեղեցին Աստուածածնայ, զծանրադին շուրջառն իւր կալաւ, եմոյժ յեկեղեցին Աստուածածնայ, զծանրադին շուրջառն իւր կալաւ, եմոյժ յեկեղեցին, զարդարեալ զեկեղեցին, բացեալ զսեղանն զարդարեալ: Զինի աղօթից՝ հանդիսապէս տարին ի վերնազանն զարդարեալ: Զինի աղօթից՝ հանդիսապէս տարին ի վերնազանն, ի տես Կաթողիկոսին, եւ հարուստ ժամ մի եղեն առանձին տունն, ի տես Կաթողիկոսին, եւ հարուստ ժամ մի եղեն առանձին տունն, ի տես Կաթողիկոսին, եւ հարուստ ժամ մի եղեն առանձին տունն: Լուքաքի թարգմանն, ի մեծարանս իրերաց եւ ի զրուցատրութիւն: Եւ յետ այսորիկ ճանապարհորդեցին պատուով մինչեւ յեղը խորութիւն»⁴²:

Կոլոտ Պատրիարքի մեղմ ու բարեացակամ դիրքը տեղի կու տայ ներքին խռովութիւններու: Լատին եպիսկոպոսին ըրած ընդունելութիւնը, Հայաստանեայց եկեղեցւոյ շարականներէն նշովքներու բաժինը զեղչելը կը յարուցանեն իր դէմ թշնամիներ. «այժմ լսեմք թէ ոմանք անձինք քահանայք եւ ժողովուրդ խորհուրդ արարեր են

39. Հ. Ստեփանոս Վրդ. Պոլիսէն, 9 Նոյեմբ. 1726ին, առ Մխ. Արքայ, Վենետիկ:

40. Հ. Պետրոս Վրդ. Պոլիսէն, 14 Փետր. 1727ին, Առ Մխիթար Արքայ, Վենետիկ:

41. Անդ:

42. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն, 2 Ապրիլ 1727ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ:

արդ տալ փաշային վասն փաթրիքին՝ թէ Փռանկ եղեալ է. զայս լըւեալ փաթրիքն՝ հնար խորհի վասն գլխաւորի սոցին զիւրամ առնուել եւ քիւրէկն ղրկել»⁴³ :

Մինչեւ 1728 թուականը բոլոր այս խնդիրները մեղմ կերպով կ'ընթանան. այնուհետեւ կացութիւնը կը փոխուի, որովհետեւ Մխիթար Արքայօր 1718ին Հռոմէն ստացած հրամանագիրը չեղեալ կը համարուի, ու Հռոմէն Պոլիս կը հասնի նոր հրահանգ, բացարձակօրէն արգելելով ոեւէ «կաթողիկէ»ի յաճախել Հայոց եկեղեցիները, թոյլ տալով միայն «գնալ ի դաւիթն եկեղեցւոյն եւ տալ զտուրք զանձանակին, որպէսզի մի՛ հալածումն յարուցանիցեն»⁴⁴ :

Բնականաբար, ասիկա ծանր հարուած մըն էր միջնորդի դեր կատարող Կոլոտ Պատրիարքի համար, որ այնուհետեւ ստիպուած էր «ի յատենի զոմանս նախատինս տալ ուղղափառաց, հանդերձ նոյն վիւր. սակայն անվնաս, զի երեւեցուցանէ թէ այնու կամի խաղաղեցուցանել զհակառակորդս եւ զխռովութիւնս նոցին խափանել»⁴⁵ :

Այս էր ահա անել կացութիւնը՝ այդ դժուարին տարիներուն : Յաջորդ շրջանին ալ (1727-1735), փոթորիկը դժբախտաբար շարունակուած է : Բայց Կոլոտ ունեցած է ուրոյն վարուելակերպ : Ամէն անգամ հալածանքը սաստկանալուն, Կոլոտ ծածուկ կերպով պատուիրակութիւն կը ղրկէ լատին եպիսկոպոսին, վստահացնելով՝ թէ ինքը անձնապէս մատ չունի անոնց մէջ, այնքան որ 1735ին, երբ կը սաստկանայ հալածանքը, անցնելով չափը, լատին եպիսկոպոսը կը տարակուսի Կոլոտի անկեղծութեան վրայ ու կ'ըսէ. «Յայլում նըւագի մինչ լինիւր հալածումն, պատրիարքն ինձ հասկացուցանէր ըզպատճառ հալածման եւ զինքն արդարացուցանէր, բայց յայսմիկ նըւագի յղեաց ինձ մարդ եւ ես ոչ լսեցի նմա»⁴⁶ :

Կոլոտի պատրիարքութեան վերջին հինգ տարիները, բարեբախտաբար, կ'անցնին շատ խաղաղ ու ներդաշնակ. Փրանսայի դեսպան Մարքիզ Վիլնեովի միջնորդութեամբ եւ հետապնդումներով կը կընքուի համաձայնագիր մը, ու այնուհետեւ կը շնորհուի ազատութիւն կրօնական, որ իւրաքանչիւրը գործէ իր խղճին համաձայն : 1737 «ի Փետրվարի 3 Երուսաղեմի պատրիարքն Գրիգոր Վրդ.ն, Կոստանդնուպոլսի պատրիարքն Յօհաննէս Վրդ.ն, Էջմիածնի նուիրակն եւ այլք գլխաւորք իշխանք եւ սառաֆք համախմբեալք ի մի»⁴⁷ ընդ ամէնը՝ քառասուն հոգի, կը հրաւիրուին ճաշի՝ Փրանսայի դեսպանին մօտ :

43. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն, 22 Ապրիլ 1727ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ :

44. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն, 12 Ապրիլ 1728ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ :

45. Հ. Պետրոս Վրդ. Պոլիսէն, 28 Յունուար 1729ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ :

46. Հ. Պետրոս Վրդ. Պոլիսէն, 2 Յունիս 1735ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ :

47. Հ. Թոմաս Վրդ. Պոլիսէն, 14 Փետր. 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ :

իսկական դրդապատճառը կարելի չեղաւ ստուգել ղեւանական թուղթերէն, սակայն կը համարինք որ սա ըլլայ նշանը՝ թէ վերջնական կերպով կնքուած է խաղաղութեան դաշինքը : Բայց թէ ժողովուրդն ալ կամ եկեղեցական դատը համաձայն էր Կոլոտի, չենք կրնար ամբողջովին դրական կերպով պատասխանել : 1737 տարուան Բուն քարեկենդանի նախօրեակին, բացի Ղալաթիոյ մայր եկեղեցիէն՝ միւս բոլոր հայ եկեղեցիներուն մէջ կը կարդացուին աւանդական նոյնքները, ու կը տարածուի լուրը թէ «մեր պատրիարքն ոչ խնդրեաց զվրէժ ի նոցունց, եւ ինքն եւս կաթողիկէ եղեալ է»⁴⁸ : Խումբ մը Կեսարացիներ ժողով կը գումարեն Աստուածածնի եկեղեցւոյն մէջ, որոշելով թէ «մեք զնա այսուհետեւ ոչ ընդունիմք զպատրիարք, այլ կամիմք մեզ պատրիարք զնուիրակն (Էջմիածնի) . եւ այսպէս եղեալ մեծ ազադակ, նաեւ նիւրակն չարայուզելով զնոսա, ամբոխ կամեցեալ են՝ հանդերձ ուրաքով՝ ղիմել ի վերայ պատրիարքին»⁴⁹ : Լուրը կը հասնի Փրանսայի դեսպանին, որ պաշտպան կանգնելով Պատրիարքին, յատուկ հրովարտակ կը հանէ՝ Էջմիածնի նուիրակը Պոլիսէն վտարելու :

Երեք շաբաթ ետք՝ Կոլոտ Պատրիարքի ձեռնասուն աշակերտներէն Յակոբ Վրդ. Նալեան «ելեալ յատենս, անիծեալ եւ բանադրեալ է զայն խաթամութն . եւ յետ նորա՝ Երուսաղեմայ Գրիգոր Վրդ.ն, եւ աւելլով եւս զայս՝ թէ անիծեալ լիցին եւ քահանայք, որք այնպիսեաց զարձակումն տայցեն՝ առանց նախապէս յղելոյ զնոսա առ մեզ»⁵⁰ :

Գրիգոր Շղթայակիր չի գոհանար միայն այսքանով, կ'ուզէ ապահով հիմերու վրայ դնել Կոլոտի պատրիարքութիւնը, ուստի նոյն տարուան քառասնորդաց մէջ օր մը (չիրցանք ստուգել ճշգրիտ թրւականը) «արար զսիւնադոս յեկեղեցւոյ Աստուածածնայ, կոչեցեալ զամենայն եկեղեցւոյն, զգլխաւորս էսնաֆից եւ զառաջիկայ քահանայս, առ յորս ասացեալ է թէ Ես եւ Յօհաննէս Վարդապետն այսքան ժամանակ է զի եղաք ձեզ առաջնորդք, ես յերուսաղեմ վճարեցի 800 քսակ պարտս Սուրբ Յակօբայ, եւ Յօհաննէս Վարդապետն չիւնեաց զայնքան եկեղեցիս՝ յետ այրման նոցին, եւ եկեղեցեաց զառաջնորդն պակասութիւնս լցոյց եւ զառաջնորդութիւնս արար . իսկ դուք լուայ, զի ոչ իցէք կամեցեալ այժմ զՅօհաննէս Վարդապետն ձեզ առաջնորդ լինի, Տեսէք, որդեակք իմ, զի ես ոչ թողում զնա միայնակ, զի ուր է նա՝ եւ ես անդ, եւ ուր նա՝ եւ ես անդ (իւսա՛, ուր ես՝ եւ նա անդ), զի նա՝ իմ որդի, եւ ես՝ նորա հայր, ըստ անդարա-

48. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 15 Մարտ 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ :

49. Անդ :

50. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 31 Մարտ 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ :

ընդհանուր վանահայրին մերոյ, որ էր ուսուցիչ մեր: Վասն որոյ եթէ ոչ կամիք զնա, ինձ եւ նմա տուր զհրաման՝ զի երթիցեմք հանդերձ փոքրաւորօք մերովք յերկիրն մեր եւ ի մենաստանի մերում վճարիցուք զկեանն մեր: Եւ լուեալք զբանս զայս ժողովրդեան՝ զկական բարձեալք ասացեալք են, թէ մեք բաց ի ձէնջ զառաջնորդ ոք ոչ կամիմք: Եւ նորա պատասխանեալ այսպէս, թէ որովհետեւ այնպէս է, ուրեմն ամենեքեանդ կնքեցէք կնքով ձերովք զթուղթ մի, որպէսզի զայն թուղթն յղեսցուք ի յօրտուն, որպէսզի մատնին ստորագրեալ զայն, ներկայացուցուք զայն թագաւորին, եւ ի նմանէ եւս կնքեցեալ եւ ստորագրեցեալ այն թուղթն, եւ ի ձեռին մերում դատնիցի, որպէսզի եւ մեք ապահով եղիցիմք ի յառաջնորդելն եւ ի քարոզելն մեր. եւ թէ լինիցի զի ոք ի քարոզելն մերում զի ինչ ասիցէ, այսինքն այսպէս մի՛ քարոզել, վասն այնպիսւոյն կացուցեալ եղիցի ի մէնջ չորս անձինք իմաստունք առ իւրաքանչիւրս եկեղեցիս, որպէսզի նոքա զայսպիսիս անձինս լրմբունեալք տարցեն առ թագաւորս, եւ եղիցին նոքա պատժեցեալք ի նոցունց»⁵¹: Ու նոյն նամակը կը շարունակէ պատմել Պոլիս գոյացած համերաշխութեան եւ խաղաղութեան հոգին, որու մեծագոյն ապացոյցն է նոյն տարւոյն (1737) Աւագ Ծաբաթ օրը եղած մեծ թափօրը, կազմուած ամբողջ հայութեամբ, լատիններէ աւ յոյներէ, որու նկարագրութիւնը իրական յաղթանակ մըն է եկեղեցական, իսկ արդիւնքը վերագրելի է մեծ մասով Կոլոտ Պատրիարք Հօր⁵²:

51. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 30 Ապրիլ 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ:
 52. Հոս կու տանք նամակին այն հատուածը ուր կը նկարագրէ եղած թափօրը. դիտելի է Կոլոտ Պատրիարքի դիրքը թափօրին մէջ. «Աւագ շաբթի դիշերն եղեւ մեծահոգակ ելումն թափօրից ի Ղալաթիայ: Եկին բազումք հրեշտակք, այսինքն ֆռանդըզու, լէհին եւ ինկիլզու հին էլին. բայց հրեշտակն ֆռանդըզու, որ է մեր նախախնամիչ, եկեալ հանդերձ մատամայինն ի Գեմերադն նստեալ ի տան դեմքին, հրամայեաց նախ հայք Լուսաւորչայ ժամուն ելանել ի թափօր, ապա լաթինք մը յետոյ յոյնք. եւ այնպէս եղեւ: Բայց յոյնքն յիմարեցան վասն հայոց, զի տրեցաւ նոցա այնպիսի պատիւ. եւ այնքան բազմութիւնք արանց եւ կանանց գոյին հայոց ուղղափառաց եւ արտուղեաց ի ճանապարհս եւ ի տունս, ընդ որովք անցաւ թափօրն, մինչ զի գրեթէ այլք եկեղեցիք հայոց ըստ բաւականին ոչ ունեցան զտիրացուս եւ զթողովուրդս: Զգեեստս եւ զշապիկս, զորս ունէին հայք այնքան մեծածախք եւ ազնիւք էին, զորս գրովն ծանուցանելն լսողաց անհաւատալի կարէր երեւիլ: Եւ ի մէջ այնք զգեստուց երկոտասան շապիկ, զորս յղեալ էր պատրիարքն, որոց իւրաքանչիւրն էր հինգ հարկուր զուռուշի: Ելեալք այնքանիւք բազմութեամբք ի Լուսաւորչայ ժամուն եկին ի դուռն ճիզվիթաց ժամուն, եւ ընթերցեալ անդ զսուրբ աւետարանն, որ ներկայ դասն ամենայն պատրիք հանդերձ զարդուք, եւ լինիւր հնչեցմունք թուփէթայից ըստ հրամանի հրեշտակին: Եւ յետ որոյ անցեալք զնացին հայք յեկեղեցին իւրեանց: Եւ յետ այսորիկ լաթինքն ելեալք թափօրիւ զնացին ի դուռն Լուսաւորչայ ժամուն, եւ նոքա որպէս արարին հայքն նոյնպէս ընթերցեալ

Որպէսզի գոյացած հաշտութիւնը երկարատեւէ, Կոլոտ կը մտածէ ընդմիշտ վերցնել «Ով հրաշալի» շարականի երեք վերջին տուները: 1737 Յուլիս 9ին դրուած նամակի մը մէջ, կը կարդանք այս ուղղութեամբ՝ թէ «արարին բազմիցս զսինադոս եւ վճռեալ եղեն բառնալ զՈվ հրաշալին»⁵³: Առնուած որոշողութիւնը կը սկսի գործադրուիլ նոյն տարին (1737). «Աստուածածնայ պահուց նախ(ը)նթաց շաբաթ օրն ոչ եղեւ կարգալ Գնդով, ոչ ի Կոստանդինուպօլիս եւ ոչ շրջակայ տեղիս, վասնզի մի օր յառաջ եկեալ վէշիր աղասի եւ 40 հալպալը՝ առ պատրիարքն ասացեալ է, թէ դուք տարին 3 անգամ ֆռանսը թագաւորին մեծ կարգացողին քուֆուր կարդաք եղեր. այսուհետեւ ով ոք արասցէ զայս՝ ինքն աքսոր եւ ապրանքն իւր թագաւորին եղիցի»⁵⁴: Զանցառու կ'ըլլայ միայն Ակնցի Տէր Մարկոս մը, որ կ'իյնայ բանտ եւ ապա միջնորդներով կը ստանայ ազատութիւն⁵⁵:

Ինչ որ կը տեսնուի՝ յաջորդ տարին ալ (1738), «Ով հրաշալին» երգուած է առանց նոյնվրին, որովհետեւ Հ. Պօղոս կը գրէ Մխիթար Արքայօր՝ թէ «լուայ զայս ինչ յումեմէ, թէ պատրիարքն ասացեալ իցէ թէ ընդէ՞ր է զի ուղղափառք ոչ դան յեկեղեցին մեր, զի նոյնն բարձաք, եւ մեք ոչ պահանջեմք զի յեկեղեցին մեր խոստովանիցին»⁵⁶:

Կոլոտ Պատրիարքի հեղինակութիւնը այնքան մեծ եղած է այս հարցին նկատմամբ, որ «Ով հրաշալի» շարականին մասին բրած իր կարգադրութիւնը գործադրուած կը տեսնենք դեռ երկար տարիներ, իրեն յաջորդող Նախնի, ու անկէ ետք՝ Գրիգորի ալ պատրիարքութեան ընթացքին: Այս ուղղութեամբ ունինք 14 Մարտ 1772 թընդհանուր նամակ մը, գրուած Պոլիսէն՝ Հ. Յակոբոս Զաւհեանի կողմէ, ուղղուած Մելքոնեան Արքայօր, հաղորդելով թէ Պոլսոյ մէջ գուժարուած է ժողով մը, երկու հարիւր անձերէ կազմուած, Գրիգոր Պատրիարքի դէմ, որ ներկայ է ժողովին: Վերջինս կ'արդարացնէ ինքզինք եւ, ի միջի այլոց, հարց կու տայ այսպէս. «Ով հրաշալին

զաւտարան զնացին ի ժամն իւրեանց: Եւ այս վասն միաբանութեան արարին, եւ այս անպատմելի ուրախութիւն եղեւ հայոց եւ լաթինացոց» (Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 30 Ապրիլ 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ):

53. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 9 Յուլիս 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ:
 54. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 23 Օգոստ. 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ:

55. «Այս ամ ոչ եղեւ կարգացեալ զնոյն. բայց ժմն ի բազմաց հակառակորդացն կոչեցեալ ակնցի Տէր Մարկոս ասացեալ է զհակառ(ակ) բանին ընդդէմ մեծաւորաց. ետ ըմպել զմա պարոնն եւ այժմ է ի բանտի. եւ բազումք զնացեալ առ պարոնն խնդրեցին զնա ազատել ... ասի թէ արտաքսելոց է զնա ի յերկիրն Ակնայ» (Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 7 Սեպտ. 1737ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ):

56. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 13 Օգոստ. 1738ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ:

ո՞վ վերցուց. պատասխանէ ոմն՝ Յօհաննէս պատրիարքն: Պատրիարքն. Անոր ետեւէն ո՞վ վերցուց. պատասխանէ ոմն՝ Յակոբ պատրիարքն: Ասէ պատրիարքն (Գրիգոր). Յօհաննէս պատրիարքին եւ Յակոբ պատրիարքին վերցուցածը ես կրնամ դնել. ես ադ ա- նունը դասուլ չեմ ընել՝ թէ ես վերցուցեր եմ զՈՎ հրաշալիին»:

Այսպէս ահա խաղաղասէր հայրապետը հաշտութեամբ եւ համե- րաշխութեամբ վերջ մը կը դնէ այս հարցին, որ փշոտ էր արդարեւ. կը գտնէ ելքի ճամբան՝ առանց վնասելու այն ժողովուրդին, որուն հովիւն ըլլալու գիտակցութիւնը ունէր:

Հոս, առանց մեր կողմէ որեւէ մեկնութեան, կ'ուզենք պատ- մութեան համար յիշատակել նաեւ այն՝ ինչ որ գտանք մեր գիւտին մէջ, նկատմամբ Կոլոտի եւ Հռոմի միջեւ եղած յարաբերութեան:

1735ի կրօնական խռովութիւններուն, երբ հալածանքը կը սաստ- կանայ «կաթողիկէ»ներու դէմ, Պոլսոյ լատին եպիսկոպոսը, որ իբր բարեկամ կը ճանչնար Կոլոտ պատրիարքը, այդ անգամ կը զայրա- նայ անոր դէմ ու լրջօրէն կը տարակուսի անոր անկեղծութեան վը- րայ. եւ այս առիթով կը պատմէ մանրամասնութիւններ՝ մերս Հ. Պօղոս Տայի Սիմոնեանի, որ կը գրէ Մխիթար Աբրահօր. «զայս, զորմէ ասելոց եմ, լուայ ի Մօնսինեօնէն, զի այս պատրիարք զգա- ւանութեան դիր յղեալ իցէ առ սրբազան պապն եւ ի նմանէ օրհնու- թիւն առեալ իցէ: Բայց յետ որոյ զայնքան հակառակութիւն եւ հայ- հոյութիւն արար, ասաց, թէ եւ վերստին մեղայ գոչիցէ՝ ոչ լինի լսելի»⁵⁷:

Երկրորդ վկայութիւնը Կոլոտի մահէն քանի մը ամիս առաջ գըր- ուած է ու կ'ըսէ. «զմի գիր եկն ի Հռոմայոս առ պատրիարքն հա- յոց Յօհաննէս Վարդապետին, որոյ թղթոյ զօրինակն Հաճի Պալոյ որդին՝ Յակօբ առեալ էր. եւ ես խնդրեցի զնորին օրինակն եւ առեալ զնա եղի յայսմիկ թղթով»⁵⁸: Յիշուած նամակը կարելի չեղաւ գըրտ- նել Ս. Ղազարու գիւտին մէջ⁵⁹:

57. Հ. Պօղոս Վրդ. Պոլսէն, 2 Յունիս 1735ին, առ Մխիթար Աբրայ, Վենետիկ:

58. Հ. Պօղոս Վրդ. Պոլսէն, 31 Դեկտ. 1740ին, առ Մխիթար Աբրայ, Վենետիկ:

59. Բոլոր այս մանրամասնութիւնները քաղեցինք Ս. Ղազարու գիւտին նամակ- ներէն. իսկ ներկայ յօդուածի շարադրութեան ընթացքին՝ գիտակցաբար չու- ղեցինք ամենեւին նայիլ Չամչեանի աւանդածներուն: Բայց մեծ եղաւ մեր զար- մանքը՝ երբ ամենայն ուր Չամչեանէն տարբեր եղբայրացութեան չենք հասած, այն տարբերութեամբ՝ որ Չամչեան ունի աւելի ընդարձակ պատմական հո- րիզոն եւ դէպքերու մանրամասն նկարագրութիւն, որմէ գիտակցաբար զգու- շացած էինք: Դիւանի նամակները կարգաւորվ՝ մեր ուշադրութիւնը գրա- ւած էին անոնց վրայ տարբեր գրչածայրով մը գրուած նշանները, եւ երբ պրպտեցինք Չամչեանի Պատմութիւնը, նշմարեցինք որ ինք օգտագործած էր նոյն աղբիւրները եւ գտնեց ներմուծած իր Պատմութեան մէջ, գրեթէ բառացի կերպով: Դիւանի նամակներու այն բոլոր հատուածները՝ որոնք մեր յօդ-

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԿԻ ԵՒ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ

Կոլոտ ու Մխիթար գործած են նոյն ժամանակներուն մէջ, գոր- ծած՝ նման հոգիով ու գաղափարականներով, նայած են իրարու ան- նախանձ կերպով, հետեւած են իրարու հեռուէն՝ բայց մօտիկ սըր- տով, ու զիտցած են գնահատել իրարու գործը: Եթէ նամակներու կամ գիւտնական վկայութիւններու պակասէն՝ այնքան ծանօթ չենք Մխիթարի զգացումներուն՝ հանդէպ Կոլոտի, սակայն այդ տարի- ներուն Պոլսէն հասած նամակներու թղթածրարը բաւական ճիշդ ըլ- լալով՝ կը գտնենք հոն Կոլոտ Պատրիարքի սրտին գաղտնի զգացում- ները հանդէպ Մխիթարի ու անոր գործին:

Կոլոտ ու Մխիթար ամենեւին թղթակցութեան չեն մտած ի- րարու հետ. դուցէ նոյն դարուն խոհեմութիւնը այդ կը պահանջէր: 1726ին Հ. Ստեփանոս Եւդոկիացի Վենետիկէն մեկնելով՝ կը մտնէ Պոլիս, ու բարեկամ ըլլալով Կոլոտ Պատրիարքի աջ բազուկ Շապան Օղլիի եւ Սեդրոսեանց Յակօբ աղայի, կը քաղէ անոնցմէ բաւական մանրամասնութիւն, որոնց շարքին նաեւ՝ թէ «պատրիարքն իբրեւ զեղջերու փափաքէ քուժ գրոյ. ոմանք ուղղափառք յորդորեալք են զպատրիարքն առ ի գրել զգիր իմն առ Գերյարգութիւնդ, որպէսզի այնու միջոցիւ, իբրու պատասխանի գրոյն իւրոյ՝ առնդունիցի ի քէն զգիր իմն, եւ նա յոյժ յօժարեալ է, միայն զայս ասացեալ է՝ թէ ոչ ոք ծանիցէ զայս, եւ ոչ ոք ընթեռնուցու զիմա եւ կամ զնորայն պատասխանի. բայց չեւ եւս եղեալ այս բան, ոմանք ի հակառակոր- դացն մերոց համբաւեն՝ թէ միշտ գիրն Գերյարգութեանդ զայ աստ առ այն եւ զնորայն առ քեզ»⁶⁰, որու վրայ ետ կը կենայ Կոլոտ իր ծրագրերէն:

1732ին Պոլիս գտնուող մեր Հ. Պօղոս Վրդ. կ'իմանայ Կոլոտի մտերիմներէն՝ թէ Պատրիարք Հայրը գրած է արդէն Մխիթար Աբ- րահօր, փափաքելով նամակին հետ զրկել նաեւ ուրիշ բաներ, որոնք չեն յիշատակուած: Հ. Պօղոս կը գրէ. «զայս գիրս յորում աւուր գրեցի (24 Դեկտ. 1732), մի օր յառաջ լուայ զի պատրիարքն Հայոց զգիր գրեալ է առ Գերյարգութիւնդ եւ կամեցեալ ընդ թղթոյն յղել զայլ ինչ. եւ զսոյն խորհուրդն բացեալ է Հաճի Պալուն, եւ նա՝ տի- րացու Աստուածատուրին, եւ նա ինձ»: Յաջորդաբար, հրապարակի վրայ կը գտնենք Աբրահամ աղա Թոմասեանեան, նոյն շրջանի մեծա-

ուածին մէջ յիշատակեցինք, ունէ մէկը կարող է գտնել Չամչեանի Գ. Գրքին Ծ, ԾԱ եւ ԾԳ գլուխներուն մէջ, իբր ապացոյց մեր ըսածին ստուգութեան: Այս երեւոյթը անգամ մը եւս կու գայ հաստատել Չամչեանի աղբիւրներու հանդէպ ունեցած հակասարմութիւնը, բան մը՝ որու մասին տարակոյսներ կը բարձրանան երբեմն:

60. Հ. Ստեփանոս Վրդ. Պոլսէն, 9 Նոյեմբ. 1726ին, առ Մխ. Աբրայ, Վենետիկ:

հարուստ վաճառականներէն մէկը, որ 1725ին ճամբորդած է Արեւմուտք եւ եղած է հիւրը Մխիթար Աբբազօր. ապա 1732ին դարձեալ նոյն ճամբով հանդիպած է Մխիթար Աբբազօր, եւ երկար վայելած անոր գուրգուրանքը, որմէ խանդավառուած՝ իր որդին Յովհաննէսը կը յանձնէ Մխիթարի: Այս Աբբազամ աղան է որ 1738ին դարձեալ կը գտնենք Կոլոտ Պատրիարքի մօտ, եւ իբր տեղեակ Մխիթարի սրտի զգացումներուն, խօսակցութիւն մը վ՛րենենայ Կոլոտի հետ. «Փաթրիկն փօսեալ է ընդ Աբբազամին վերոյդրեցելոյ եւ ասացեալ է թէ կամիմ Աբբազօրն գրել զգիր. Աբբազամն եւս ասացեալ է նմա թէ գրեալ՝ քանզի ասացեալ է նմա. ես մինչդեռ քի ի վանքում՝ յաւուր միում ասաց Աբբազայրն եթէ փաթրիկն գրիցէ զգիր առ իս, եւ ես գրեցից առ նա, ուրեմն բարուք է գրելդ»⁶¹:

Հակառակ այս խորհրդակցութիւններուն՝ փոխադարձ թղթակցութեան հետք չկայ Ս. Ղազարու դիւանին մէջ:

Կոլոտ Պատրիարք, որ Պոլսոյ մէջ եղած էր խթանիչ գրական զարթոնքին, չէր կրնար անտարբեր մնալ Մխիթարի կատարած հրատարակութիւններուն հանդէպ, ու շատ մօտէն կը հետեւէր անոր ամէն շարժումին: Այս ուղղութեամբ եւս ունինք բաւական հարուստ վկայութիւններ. տեսնենք ժամանակագրական կարգով:

1719ին, Մխիթար կը հրատարակէ Գիրք մուրօքեանց, ու յաջորդ տարին ալ Գիրք առաքինութեանց: Շղթայակիր Գրիգոր Պատրիարք Երուսաղէմէն կը գրէ Կոլոտի, նպաստաւոր արտայայտուելով գիրքերուն մասին, այնպէս որ Կոլոտ եկեղեցւոյ մէջ կը կարդայ բազմութեան Շղթայակիրի նամակը, հաւանաբար յանձնարարելու համար անոնց՝ այդ գիրքերուն ընթերցումը. «յաւուր միումն Պատրիարքն Հայոց (Կոլոտ) զնամակ կարդացեալ է ի ժամն, զոր առաքեալ է Երուսաղէմայ առաջնորդ Գրիգոր Վրդ.ն, նորում յետ այլոց բանից գրեալ է այսպէս. Ի վէնէտիկ ստամբայ եղեալք Մոլութեանց եւ Առաքինութեանցն են լաւ գրեանք. բայց թէ գրիչոսկորոս հերետիկոսաց քափին են եղեալք, ուր պարտիք անցանել»⁶²: Եւ իրապէս այս զոյգ հատորները մեծ ընդունելութիւն կը գտնեն Պոլսոյ մէջ, որու մասին անդադարձած ենք այլուր աւելի ընդարձակ⁶³:

Կոլոտ Պատրիարք իր բոլոր կեանքի ընթացքին ծարաւով մը ըսպասած է որ Մխիթար հրատարակէ Ս. Թոմաս Ազուինացիի աստուածաբանութեան հայերէն թարգմանութիւնը: Լսած է արդէն թէ Մխիթար իր աշակերտներով ձեռնարկած է այդ հսկայ գործին թարգ-

մանութեան, լսած է մինչեւ անգամ թէ իբր արդէն իսկ կատարուած է տպագրութիւնը: 1725ի Սեպտեմբեր ամսուն, Սեբաստացի Հ. Միքայէլ Վրդ. նաւով կը մտնէ Պոլիս, հետը տանելով Վենետիկի նորատիպ գիրքերէն, վաճառելու համար: Բայց որովհետեւ կարգ մը Հայեր Պատրիարքին առջեւ ամբաստանած են Մխիթարը, ըսելով «Թէ Փռնկիստանու Փռնկի գրգեր գան եւ Փռնկ չինեն զապն մեր եւ չէ փոյթ քեդ»⁶⁴, Կոլոտ յատուկ ֆէրման հանել կու տայ վէզիրէն, որ Վենետիկէն եկած գիրքերը չկարենան նաւէն դուրս հանել առանց Պատրիարքին գրաքննութեան: Այսպէս կը ստիպուի գործել Կոլոտ, որպէսզի «կարկեցու(ս)ցէ գրեան նոցին, ասելով թէ տեսի եւ իմացայ եւ են բարի գրեանք»⁶⁵: Պատրիարքը գրաքննիչ կը կարգէ երկու հոգի, Հաճի Պալին եւ իր աշակիցն ու խորհրդատու Սառաֆ Շապան Օղլին, որոնք թէ՛ Միքայէլի, եւ թէ՛ մաքսապետին բարեկամ ըլլալով՝ ոչինչ մաքսով կ'ազատեն գիրքերը: Ինչ որ կը տեսնուի, երկու գրաքննիչները յատուկ պատուէր ունէին Կոլոտէն, Վենետիկէն հասած գիրքերուն մէջ փնտռելու Ս. Թոմասի գործերը. «որոնէր զթօմա Ազուինացւոյ աստուածաբանութիւնն. ասաց թէ մեք լուաք թէ ստամբայեր են. ես ասացի ոչ»⁶⁶: Ուրիշ նամակի մը մէջ՝ «կարի որոնէր եւ խնդրէր զաստուածաբանութիւն Թոմայի Ազուինացւոյ, ասելով. մեք լուաք թէ ստամբայ տուեր են. ես ասացի թէ ոչ»⁶⁷:

Տարի մը ետք, 1726ին, Եւդոկիացի Հ. Ստեփանոս կը մտնէ Պոլիս, որ հետը ունի միայն անձնական գործածութեան համար գիրքեր, որոնց մէջ նաեւ Ս. Թոմասի աստուածաբանութեան ձեռագիր դասագիրքերը. «պատրիարքն տեղւոյս այնքան փափաղանօք որոնէ զսուրբ Թօմա, մինչ զի ասն թէ յարքունուստ ունի զգիր, զի ի վէնէտիկու եկեալ գրեանց սնտուկսն ներմաքսարանի նախ առաջի նորա բանիցին, եւ ապա մաքսապետն առնելով զմաքսն թոյլ տայցէ տանել արտաքս: Ուստի եւ իմ լուեալ զայս, փութացեալ գնացի ի նաւն, որ չեւ եւս էր գնացեալ առ մաքսարանն, աղաչեցի զարքանեակս մաքսապետին, տալով 10 փարայ, եւ հանի զգրեանսն սրբոյն Թոմայի. իսկ արքանեակն գոլով ուրացօղ՝ ասաց. ծանեայ, ծանեայ, ա՛ռ եւ գնա դպուշութեամբ»⁶⁸:

Այս դէպքերէն տասներկու տարի ետք՝ Կոլոտ դարձեալ կը հետաքրքրուի նոյն գիրքերով, անոնց տպագրուած ըլլալու հարցով: Աբբազամ Թոմասեանի, որու մասին խօսեցանք վերեւ, կը հարցնէ Կոլոտ՝ թէ արդեօք Մխիթար թարգմանուած ունի՞ր ամբողջ Ս. Թո-

61. Հ. Թոմաս Վրդ. Պոլիսէն, 6 Օգոստ. 1738ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

62. Հ. Պողոս Վրդ. Պոլիսէն, 7 Նոյեմբ. 1722ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

63. ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. ՄԱՀԱԿ, Մխիթար Աբբաօր հրատարակչական առաքելութիւնը, «Բազմ.» ձև (1977), Թ. 3-4, էջ 457-459:

64. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն 5 Հոկտ. 1725ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

65. Ամդ:

66. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն, 22 Սեպտ. 1725ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

67. Հ. Միքայէլ Վրդ. Պոլիսէն, 5 Հոկտ. 1725ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

68. Հ. Ստեփանոս Վրդ. Պոլիսէն, 10 Հոկտ. 1726ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

Մխիթարի հրատարակութիւնները ուղղակի ստանալու համար⁷⁸։ 1730ին, երբ լոյս կը տեսնէ Մխիթարի «Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի», Մաղաքիա դպիր կը վկայէ թէ «Ամենապատուելի Վեհն Պօլսոյ... Քերականութիւնն ի տէրութենէդ արտադրեցեալն վեց հատորն խոյն էառ»⁷⁹։ Մխիթար Արքայօր Աստուածաշունչը հրապարակ ելլելէն դեռ երեք տարի առաջ՝ Կոլոտ ցոյց կու տայ հետաքրքրութիւն եւ սպասում. «ԳԱստուածաշունչն ստապրելի աստ կարծեն թէ վաղուց սկսեալ են այդը (ի Վենետիկ) դուրսագրումն, եւ յաճախակի հարցանէ պատրիարքն ցըրթալէին թէ ե՞րբ, եւ նա ցտիրացու Վարդանն մեր թէ ե՞րբ դալոյց է»⁸⁰։ 1736ին, նորատիպ Աստուածաշունչները կը հասնին Պոլիս, ու պատրիարքարանէն կ'ուղեն ստանալ ո՛չ մէկ՝ այլ քսան օրինակ, ու Մաղաքիա դպիր միջնորդ կ'ըլլայ՝ զեղչով դնելու համար, փոխանակ 25ի՝ 18 դուռուշի. «ի պատրիարքարանէն խնդրեալ էին 20 Աստուածաշունչ 18ական դուռուշի, ձեռամբ տիրացու Մաղաքիային. ասացի ոչ լինիլ»⁸¹։ Յաջորդ նամակներէն կարելի չեղաւ ստուգել թէ համաձայնութիւնը գոյացած է կամ ոչ։

Աստուածաշունչի տպագրութենէն քանի մը տարի ետք, 1739ին, Մխիթար լոյս կ'ընծայէ նոր հատոր մը եւս «Մեկնութիւն Մատթէի Աւետարանին»։ Պոլիս զրկելով՝ յատկապէս կը յանձնարարէ Մխիթար որ օրինակ մը ընծայուի Կոլոտ Պատրիարքին։ Մխիթարի այս նամակին պատճէնը չէ պահուած, բայց ունինք անոր պատասխանը, ուր կը կրկնուին Մխիթարի խօսքերը. «Ըստ որում գրեալ էիր, յանձնեցի Պետրոսին՝ զի ինքն տարեալ տալոյց է զմի Մեկնութիւն Աւետարանին Պատրիարքին Հայոց»⁸²։ Ու այս առիթով է որ Հ. Պօղոս Վրդ. կու տայ մեզի յարգի վկայութիւններ. «բայց գիտելի է զի նա (իմա՝ Պատրիարքն) նախ քան զհանելն մեր զստուակն գրեանց, քանիցս քանի անգամ յղեաց մարդ առ ի առնուլ զՄեկնութիւն Մատթէոսի Աւետարանին»⁸³։ Կոլոտ Պատրիարք ձեռք առնելով Մխիթարի այս նոր հատորը, զմայլած՝ կատարուած աշխատանքին վրայ, եւ իր իսկ մեկենասութեամբ հրատարակութիւններուն հետ համեմատելով՝ դեռ աւելի զնահատած է Մխիթարի վաստակը, ու զէպի երկինք բարձրացուցած է գոհարանական ուղերձ մը։ Նոյն օ-

78. «Լուայ զի պատրիկն ընդ միոյ վանդակիցւոյ սակարկեալ է բերել զիւր կամեցեալ գրեանս, եւ տալ նմա ժ-ծա շահել եւ գնել զնոսա»։ (Հ. Պօղոս Վրդ. Պոլսէն, 15 Նոյեմբ. 1729ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ)։

79. Մաղաքիա դպիր, Պոլսէն, 3 Հոկտ. 1732ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ։

80. Հ. Թոմաս Վրդ. Պոլսէն, 6 Մայիս 1733ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ։

81. Հ. Պօղոս Վրդ. Պոլսէն, 18 Օգոստ. 1736ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ։

82. Հ. Պօղոս Վրդ. Պոլսէն, 15 Սեպտ. 1739ին, առ Մխիթար Արքայ, Վենետիկ։

83. Անդ։

Համարումս... և քննարկեալ, վերադառնալ իրենց... և քննարկեալ, վերադառնալ իրենց... և քննարկեալ, վերադառնալ իրենց...

Իրենց... և քննարկեալ, վերադառնալ իրենց... և քննարկեալ, վերադառնալ իրենց... և քննարկեալ, վերադառնալ իրենց...


[illegible]

Նոյան Երես թիվ 1
3 հոկտեմբեր 1938
Դեպի Երես 4 ին

Der Herr Herrmann von Zimmern
ist wohlwollender Herr der bayerischen,
in der Stadt Zimmern Zimmern wohnend
muss die Forderung des



Եւ քանի որ հեռացաւ լի սէր
որոքնս. և ոչ չարելով քան զամենի
Բարձրանայս՝ Պայծառի քննարկէ
վն լի Բոլոր զի Երևս չնէր քիկ
և զարգաւաթն սէրն իմ Բոլոր իմ
հայրս. Գերան Գործուի. Եւ զի
իրի յիշի ի հրէի Կանգնուի
անհրաժեշտ և զմոռացաւ զի զարգւ
չաւ և անլի քան անդի, Երևս լի ի
հշտն Եւ զի իմ Գործուի Կանգնու
զարգւ Գործուի. զոր Գործուի
հրէի. սիրով անլի.



© National Library of Armenia

րերուն գրուած նամակի մը մէջ, կը կարդանք սա տողերը. «յուայ յումմանէ՝ թէ ասացեալ իցէ Պատրիարքն Հայոց, թէ 25 քսակ դրամ վատնեցի վասն գրեանց, բայց ի գալ մեկնութեան Մատթէոսի Աւետարանին՝ չիք տեղի գնացեալ եղեն»⁸⁴:

Հոս՝ տեղն է մէջբերելու Կոլոտ Պատրիարքի այն սքանչելի խօսքը՝ զոր արտասանած է Մխիթար Աբբաճօր մասին, Ս. Գէորգ եկեղեցւոյն բեմէն, ամբողջ բազմութեան առջեւ. «Աստուած հաստատ պահեսցէ զաթոռն Հայր Աբբային, զի գրեամբք լցոյց զա(ղ)պս մեր եւ փոքր Լուսաւորիչ եղեւ ազգին մերոյ»⁸⁵:

Մխիթարի հետ՝ Մխիթարի աշակերտներն ալ հետզհետէ սիրելի կը դառնան Կոլոտի: Հակառակ որ Կոլոտ ստիպուած էր խիստ վարուել հայ «կաթողիկէ» կղերին հետ, մեղմ աչքով կը նայի Մխիթարի որդիներուն, եւ այս բանը շատ անգամ յայտնած է իր մերձաւորներուն՝ որոնք լուրը կը հասցնէին մեր վարդապետներուն:

Տեսանք արդէն թէ 1720–1721 տարիներուն կատարուած հալածանքներուն ժամանակ՝ լատին եպիսկոպոսն անգամ այն համարումն ունէր, թէ այդ հալածանքը Մխիթարի որդիներուն համար չէր: 1726ին, երբ Հ. Եղիա կը հասնի Պոլիս, հետեւեալ յատկանշական տողերը կը գրէ Մխիթարի. «Բոլոր քաղաքն գրեթէ իմացան ի գալն իմ աստ, մինչ զի Պատրիարքն եւ Կաթողիկոսն. ոմանք ի յուղափառաց ասացեալ են հինգ վեց ամիս յառաջ՝ թէ ի գալն Եղիա Վրդ. ին աստ, Պատրիարքին ասեմք՝ զի տայցէ զհրաման քարոզելոյ ի յեկեղեցիս: Հաճի Պալին երեկեան օրն եկն առ իս եւ խօսեցաք երկար ժամանակս. հարկադրեաց զիս թէ վաղիւն գնամք առ Կաթողիկոսն, զի է մեծ բարեկամն Կաթողիկոսին եւ Պատրիարքին: Թէպէտ կարի հեռի է յինէն այսպիսի բան. ասաց ինձ. Թէ չես կամիր գալ ընդ իս, լաւկէկ փէշկէկ մի տուր որ տանիմ, զի Կաթողիկոսն եւ Պատրիարքն խիստ կու սիրէ զձեզ եւ զձեր Մեծաւորն, եւ այս այնքան յայտնի՝ մինչ զի յաւուր միում ի մեծի հանդիսի, ի մէջ բազմականաց դըրուատելով գովաբանեաց զձեր Մեծաւորն»⁸⁶: Ուրիշ վկայութեան մը համաձայն ալ, «(Պատրիարքն) զայս եւս ասացեալ է թէ զաշակերտս Աբբային ոչ հալածեմ, միայն թէ զգուշութեամբ չըջիցին աստ եւ անդ, զի մի՛ գուցէ այլք տայցեն կալնուլ»⁸⁷: «մերոց անձանց ոչ գոյ երկիւղ, զի Պատրիարքն կարի սիրէ զձեզ եւ զՄիաբանութիւն մեր գովէ եւ զԳերյարգելիդ դրուատէ»⁸⁸:

Ինչպէս կը նշմարուի, Մխիթարեան Հայրերը, իրենց նամակ-

84. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 29 Յունուար 1740ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

85. Հ. Պօղոս Վրդ. Պոլիսէն, 1 Փետր. 1736ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

86. Հ. Եղիա Վրդ. Պոլիսէն, 2 Հոկտ. 1726ին, առ Մխիթար Աբբայ, Վենետիկ:

87. Հ. Ստեփանոս Վրդ. Պոլիսէն, 9 Նոյեմբ. 1726ին, առ Մխ. Աբբայ, Վենետիկ:

88. Հ. Պետրոս Վրդ. Պոլիսէն, 15 Յունուար 1727ին, առ Մխ. Աբբայ, Վենետիկ:

ներուն մէջ, խորին յարգանքով կ'արտայայտուէին մեծանուն Կոլոտ Պատրիարքի մասին, մանրամասնօրէն արձանագրելով անոր խօսքերն ու շարժումները, ամէն ինչ հաղորդելով իրենց Աբբահօր, որ նոյն-պէս՝ իր կարգին՝ ուշադրութեամբ ու սիրով կը հետեւէր Կոլոտի գործունէութեան:

Կոլոտ ալ, փոխադարձաբար, կը յարգէր Մխիթար Աբբան ու անոր աշակերտները եւ հաշտ աչքով ու ազնուօրէն կը վարուէր անոնց հետ, անշուշտ տեսնելով անոնց մէջ ուղղամիտ ու հաւատաւոր եկեղեցականներ, ազգային աւանդութիւններու նախանձախնդիր առաքեալներ, որոնց նպատակն էր՝ ինչպէս իրենք՝ հայ ժողովուրդի հոգեւոր լուսաւորութիւնը:

Բազմաշնորհ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի նկատմամբ մեր դիւանական թուղթերու այս համառօտ համադրութիւնը կ'ազնեց փակել՝ Ս. Ղազարի դիւանէն հանուած՝ Մաղաքիա դպիր ձէվահիրճեանի Գաւաղանագրքի այն հատուածով, որ կը հայի անոր բեղուն կեանքին ու գործունէութեան:

«Յով(հ)ան(ն)էս վարդապետ Բաղեշցի, Ռձկի, Ս(ե)հտ(ե)մբերի է: Յաւուրս սորա եւ աշխատութեամբ սորին կրկին բաժանեցաւ պատրիարքութիւնն Երուսաղեմի ի Ստամպոլոյ: Եւ յաւուրս սորա լաթինք հրաման առին նորոգելոյ գտանարն Սրբոյ Յարութեան. սա եւս բարի նախանձ շարժեալ մեծաւ ջանիւ յառ հրաման ի թագաւորէն նորոգել եւ գրածինն մեր Սրբոյ Յարութեանն:

«Նմանապէս եւ սորին աշխատութեամբ նորոգեցան ամենայն եկեղեցիքն Ստամպոլու, Սուրբ Աստուածածնի, Սուրբ Գեորգա(յ), Սուրբ Հրեշտակապետու եւ Լուսաւորչի սրբոյ:

«Այլ եւ յաւուրս սորա տարածեցաւ գիտութիւն ազգիս Հայոց: Ստացաւ եւ բազում աշակերտս, որ ամենեքեան եղին ուսուցիչք եւ բանիբուն վարդապետք:

«Այլ եւ ետ թարգմանել գրագում գրեանս ի լատինաց(ւ)ոց առ հայս:

«Այլ եւ ձեռնտուութեամբ սորին ազատեցաւ Սուրբ Յակոբ ի յանձնում պարտուց:

«Արար եւ գայլ ուղղութիւնս բազումս. եւ զի բարուքն էր անարժաքասէր, վարուքն պարկեշտ, գիտութեամբ եւ վարդապետութեամբ կարի մոխ:

«Կացեալ ամս իղ ի պատր(ի)արքութեան իռ(ր)մում յաթոռոջ եւ վախճանի»⁸⁹:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄԺԵՄԻԱՆ

Résumé

NOUVEAUX MATERIAUX RELATIFS A HOVHANNES KOLOT PATRIARCHE ARMENIEN DE CONSTANTINOPLE

(P. SAHAK DJEMDJEMIAN)

L'Académie Arménienne de St. Lazare des Pères Mekhitaristes de Venise a tenu une séance spéciale en hommage à la mémoire du Patriarche Kolot de Constantinople, dont le tricentenaire est commémoré cette année en plusieurs manifestations académiques, religieuses et populaires, à Ejmiacin et à Istanbul, comme dans les principaux centres de la diaspora arménienne.

Durant la séance tenue à l'Académie de St. Lazare, l'A. de cet article a présenté les résultats d'une recherche effectuée dans les archives de St. Lazare et concernant les rapports entre Kolot et Mekhitar, le fondateur des Mekhitaristes. Cette étude, reproduite ici, illustre d'une nouvelle lumière plusieurs détails relatifs à la vie et à l'activité du patriarche Kolot, de même qu'aux vicissitudes de la communauté arménienne de l'époque à Constantinople. Parmi ces détails, nous trouvons digne d'une mention spéciale la décision prise par Kolot de lever l'anathème prononcé en certains jours dans la liturgie arménienne contre le Pape Léon I et le Concile de Chalcédoine.

Un chapitre entier est consacré aux circonstances particulières de l'élection du catholicos Karapet Oulnec'i (1725-26), car Kolot lui-même y joua un rôle décisif.

Le dernier chapitre soumet à une analyse serrée les documents où se révèlent l'estime et la sympathie sincères dont Kolot a fait preuve à l'égard de Mekhitar et de son œuvre.

L'article est suivi de deux documents inédits: l'*Autobiographie du catholicos Karapet Ulnec'i* (Cod. N° 2712 de St. Lazare), qui nous communique beaucoup de détails sur la vie et l'activité du Patriarche Kolot (v. ci-dessous, pp. 283-295), et une *Lettre adressée par Kolot, en 1738, à Rome, au Cardinal espagnol Luis A. Belluga (1662-1743)*, conservée aux Archives de la *Propaganda Fide* (Scrittura rif. in Congr. 1775-1777, vol. 18, f. 145r-145v, f. 155); v. ci-dessous, pp. 296-301.